Զ. ՏԱՐԻ 1629 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 11 ՄԱՐԳԱՑ 4381 — Հ. Տ. 17 ՅՈՒՆԻՍ 1889 — Ն. Տ. 29 ՅՈՒՆԻՍ 1889 — ՀԻՃՐ. 1 ԶԻԼԳԱՏԷ 1306 ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ [illegible] ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	կանխիկ վճարմամբ	160
» »	Վեցամսեայ	» »	80
» »	Եռամսեայ	» »	40
Գաւառաց »	Տարեկան	» »	200
» »	Վեցամսեայ	» »	100
Օտար երկիրներէ	տարեկան	ֆրանք	56
» »	վեցամսեայ	»	28

Դուրս ղրկուած լրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 17 ՅՈՒՆԻՍ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎ

Ամէն տարի Աւստրիոյ և Հունգարիոյ Խորհրդարանք իրենց մէջէն մէկ մէկ Պատուիրակութիւն կ'ընտրեն, այն աւագ խնդրոց վրայ խորհրդակցելու համար յորս Տէրութեան երկու մասերն ևս հաւասարապէս շահ ունին, ինչպէս արտաքին քաղաքականութիւն, զինուորական գործեր եւ տնտեսական հասարակային խնդիրներ։

Այս Պատուիրակութեանց նստաշրջանը տարի մը Վիեննայի մէջ և յաջորդ տարին Փեշթայի մէջ տեղի կ'ունենայ։ Իրենց նիստերն սկսելէ յառաջ, Պատուիրակութիւնք խմբովին կ'երթան իրենց յարգանքը մատուցանել Կայսր-Թագաւորին։ Երբ Վիեննայի մէջ գումարին, Մաճառներն առաջ կը ներկայանան իբրեւ հիւր, և երբ Փեշթայի մէջ գումարին, Աւստրիացիք առաջ ներկայանան Կայսեր։

Այս տարի նիստերն ի Վիեննա տեղի կ'ունենան, և ամենէն առաջ Մաճառ պատուիրակները Կայսեր ներկայացան իրենց ազգային շքեղ համազգեստներով, զորս իրենցմէ ոմանք աւելի ևս ակնախտիղ հանդերձազարդած էին թանկագին քարերով։ Այն համեստ պատուիրակներն որք՝ Փէշթէր Լօյտ անօրէն Տքթ. Ֆալքի կամ բանաստեղծ-փիլիսոփայ Պ. Մոռիս Եոքայի նման՝ ԺԹ դարու պետական մարդոց յատուկ սեւ թաւշեայ պարզ վերարկուներ հագած էին՝ գրեթէ արտաս մ'էին ոսկեճամուկ և ականակուռ համազգեստից այդ գունդին մէջ։

Կայսրը զատունք ընդունեց, մաճառ ձիաւորաց զօրապետի համազգեստ հագած։ Ի դիմաց Մաճառ Պատուիրակութեան խօսեցաւ կոմս Ֆրանձ Զիչի, որ հաստատեց թէ «բովանդակ Եւրոպիոյ մէջ միջազգային կացութիւնը չենք կրնար նպաստաւոր համարել խաղաղ գործունէութեան՝ իմացական և նիւթական քաղաքակրթութեան ասպարիզին մէջ։ Այս կացութիւն թոյլ կուտայ ինչ ինչ յառաջդիմութիւններ իրագործելու, բայց առ այս խաղաղութեան պահպանումը բացարձակ անհրաժեշտ է»։

Ֆրանձ Եօզէֆ կայսր պատասխանեց մաճառերէն ճառ մը կարդալով, զոր արդէն ներկայացուցինք մեր ընթերցողաց։

Մաճառ Պատուիրակութիւնը դուրս ելնելուն պէս, կայսրն իր զգեստը փոխեց, և աւստրիացի Մարէշալի մը համազգեստն հագած, ընդունեց աւստրիական Պատուիրակութիւնն։

Այս Պատուիրակութեան նախագահ Վինտիշկրէձ իշխան մաղթեց որ կայսերութեան հետեւած աշխարհավարութիւնը խաղաղութիւնը պահպանելու արդիւնքն ունենայ։

Կայսրը կարդաց մի և նոյն ճառն, այս անգամ գերմաներէն լեզուաւ։

Այս պաշտօնական նիստէ ետքը, Կայսրն, ըստ սովորութեան, մտերմաբար խօսակցեցաւ այլ և այլ պատուիրակներու հետ։

Պ. Թիձա ներկայացուց Մաճառ Պատուիրակութեան նոր անդամները։ Կայսրն յատկապէս շնորհակալութիւն յայտնեց առ Պ. Մոռիս Եոքայ՝ վաղամեռիկ գահաժառանգ Ռուտոլֆ Իշխանին յիշատակը պաշտպանելուն համար։ Կայսրը Փէշթէր Լօյտի անօրէն Տքթ. Ֆալքի ևս շնորհակալութիւն յայտնեց այս լրագրին ընթացքին համար։

Աւստրիացի պատուիրակաց մէջէն Պ. ֆոն Տէմէլի հետ երկարօրէն խօսակցելով, Կայսրն ըսաւ. «Տարակոյս չկայ թէ քաղաքական կացութիւնն անստոյգ է. բայց առաջ ալ այնպէս էր։ Յուսանք որ այս անգամ ևս պիտի պարզուի։ Ի Ռումանիա գործերը շատ լաւ կ'երթան։ Ի Սերպիա կացութիւնն այնչափ յոռի չէ որչափ թուի լինել։»

Կայսրը նոյն պատուիրակին ըսաւ նաև. «Շատ անգամ լրագիրք քաղաքական կացութիւնը չափազանց տխուր կը նկարագրեն։» Դառնալով առ Պ. Ռիկըր, պետ Ծեր Չեխերու կուսակցութեան, Կայսրն յոյս յայտնեց որ Պոհեմիոյ ընտրութեանց մէջ Երիտասարդ Չեխք յաղթութիւն չպիտի տանին։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ

Իտալեան լրագիրք ոմանք կ'իմանան թէ Վիլհէլմ կայսրն ու կայսրուհին ամրան եղանակին մէջ ոչ-պաշտօնական կերպիւ մը Մոնձա պիտի երթան յայցելութիւն արքայական գերդաստանին Իտալիոյ, և քանի մը օրեր ի Հռոմ և ի Նափոլի կանգ առնելով, անտի Յունաստան պիտի ուղեւորին։

ԶՈՒԻՑԵՐԵԱՆ ԽՆԴԻՐ

Պէրլին, 25 յունիս.— Պիզմարք իշխանի թերթը, Նօրտ Տէօյչէ Ալկ. Ցայթունկ, նոր յօդուած մը կը հրատարակէ Զուիցերիոյ չէզոքութեան վրայ՝ յետ Վիեննայի Վեհաժողովոյն (1815)։ Կ'ըսէ թէ Զուիցերիա, իւր ներքին կազմակերպութեան փոփոխմամբ, հեռացած է Վիեննայի Վեհաժողովոյն տրամադրութիւններէն, և բաց աստի, Բրուսիա, Աւստրիա և Ֆրանսա, իրենց 1848 յունուար 15ի ծանուցագրով, յայտարարած են թէ չեն կրնար Զուիցերիոյ նկատմամբ իրենց յանձնառութիւնները պահպանել բայց եթէ Զուիցերիա խղճի մտօք գործադրէ իւր բաժնին ինկած պարտականութիւնները։ Ռուսիա ևս մասնակցած էր այս յայտարարութեան։ Պիզմարքեան թերթը կ'եզրակացնէ ըսելով. «Չէզոքութիւնն ո՛չ միայն իրաւունք մը կուտայ Զուիցերիոյ այլ և պարտականութիւններ կը դնէ նորա վրայ։ Եթէ միջազգային իրաւանց սկզբունք մ'է թէ ո՛չ մէկ Պետութիւն իւր հողին վրայ կրնայ թոյլատրել ուրիշ Պետութեան մը ապահովութեան վնասաբեր բաներ, նոյն սկզբունք ամենէն աւելի կը զօրէ ա՛յնպիսի Պետութեան մը նկատմամբ որուն չէզոքութիւնն, ամբողջութիւնն և անբռնաբարելիութիւնն երաշխաւորուած են ուրիշ Պետութեանց կողմէ։»

—Պեռն, 24. —Երէկ ի Զուրիխ կատարեցաւ Մօրաթի ճակատամարտին տարեդարձի հանդէսը։ Մօրաթ հռչակաւոր է այն յաղթութեամբ զոր 1476ին Զուիցերիացիք տարին հոն Պուրկօնեի հռչակաւոր դքսին՝ Յանդուգն Շարլի վրայ, հակառակորդ Ֆրանսայի Լուի ԺԱ թագաւորին։ Ներկայ էին կառավարական և քաղաքային իշխանութիւնք, և երեսուն հինգ ընկերութիւնք իրենց դրօշներով և խուռն բազմութեամբ։ Բողոքականաց հոգեւոր հովիւը պարագային յարմար բանախօսութիւն մ'ըրաւ, որ ջերմապէս ծափահարեցաւ։ Մանաւանդ ընդհանուր հաւանութեան արժանացաւ այն հատուածն ուր ըսաւ թէ «Եթէ երբեք ուրացուի դիւանագիտական մելանն որով ստորագրուած են Զուիցերիոյ անկախութիւնն ու չէզոքութիւնն ապահովող դաշնագիրք, Զուիցերացիք պատրաստ են իրենց արեամբ վերստին գրել զանոնք, իրենց հայրենի երկիրը պաշտպանելով ամեն օտար միջամտութեան դէմ, և նախամեծար համարելով մահը քան անպատւութիւնը»։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Պէրլին, 25. —Բրուսիոյ Լէոփոլտ իշխանին ամուսնութիւնը Վիլհէլմ Բ. Կայսեր քենւոյն հետ՝ երէկ տեղի ունեցաւ։ Եօրկիօս թագաւոր ներկայ էր արարողութեան։

—Պեռն, 25. —Ազգային Ժողովն անվէճ քուէարկեց 600,000 ֆր.ի վարկն, որ կը խնդրուէր Սէն-Կոթառի ներքնուղւոյն զինուորական պաշտպանութեան համար։ (Գերմանիայէն ի Զուիցերիա ամենէն կարճ ճամբայն է Սէն-Կոթառի ներքնուղին։)

—Սոֆիա, 25. —Սերպիոյ նոր ներկայացուցիչ Պ. Պոտի այսօր սկսաւ իւր պաշտօնավարութիւն։ Այցելութիւն տալով արտաքին գործոց նախարար Պ. Ստրանսքիի, Պուլկարիոյ համար Սերպիոյ բարեկամական զգացումներն արտայայտեց։

—Վիեննա, 26.—Պաշտօնապէս հաստատեցաւ այն լուր թէ Պելկրատի աւստրեան դեսպան Պ. ֆոն Հէնկէլմիւլլէր պաշտօնանկ եղած է։ (Միլան թագաւորին հրաժարումէն ի վեր, Պելկրատի աւստրեան դեսպանին տկար և ապարդիւն քաղաքականութիւնը շատ կը քննադատուէր ի Վիեննա և ի Փեշթա։)

—Պրիւքսէլ, 25.— Լրագիրք ոմանք կ'իմանան թէ Վիլհէլմ Բ. պախարակեր է այն Գերմանաց և այն գերման լրագրաց ընթացքն որք մասնակցած են փառաւորման Ճիորտանօ Պրունոյի յիշատակին։ Քէօլնիշէ Ցայթունկ ևս կ'արտատպէ այս լուր։

—Հռոմ, 24.—Կառավարական լրագիրք յօդուածներ կը հրատարակեն Վատիկանի հետ Ֆրանսայի յարաբերութեանց վրայ, զորս չափազանց մտերմական կը գտնեն, և կ'ըսեն թէ Ֆրանսա, Իտալիոյ զօրութիւնը տկարացնելու համար, Պապութեան յաւակնութեանց ոյժ տալու կողմը կը գտնուի։

—Փարիզ, 25.—Պօնափարթեան կուսակցութեան մեծագոյն մասին պետ Վիքթոր Նափոլէոն Իշխան, նամակ մ'ուղղելով առ Պ. Մաքօ, կը հաւանի Աջակողմեանց այն Յայտարարութեան, որով՝ ինչպէս կը յիշուի՝ առանց Պօնափարթեանի և Արքայականի խտրութեան՝ կոչում եղած էր պահպանողական Ֆրանսացիներուն, առաջիկայ ընտրութեանց առթիւ մահացու հարուած մը տալու այժմեան հանրապետական զեղծ և աղետաբեր դրութեան։

—Թրիէսթէ, 25.—Քաղաքապետ Պ. Պաձօնի պաշտօնական այցելութիւն մ'ընելով առ Պ. Տուրանտօ, հիւպատոս Իտալիոյ, յանուն Թրիէսթէի քաղաքապետութեան և հասարակութեան ցաւ յայտնեց հիւպատոսին եղած անարգանաց համար։ Յայս յայտնեց թէ Պ. Տուրանտօ տակաւին երկար ժամանակ պիտի մնայ ի Թրիէսթէ։

—Պրիւքսէլ, 26.— Պելճիոյ Նախարարապետն Երեսփ. Ժողովոյ մատոյց օրինագիծ մը, որով Խորհրդարանէն վաւերացումը կը խնդրէ Քօնկոյի երկաթուղեաց շինութեան համար հանուելիք տասն միլիոն ֆր.ի փոխառութեան։

—Փեթերսպուրկ, 26.—Ռուս մամուլը խաղաղասէր կը գտնէ Աւստրիոյ Կայսեր ճառը։

—Պէրլին, 25. — Բովանդակ լրագրութիւնը կը խօսի Աւստրիոյ Կայսեր ճառին վրայ։ Նօյէսթէ Ցայթունկ և Վօսսիշէ Ցայթունկ ի վեր կը հանեն Պուլկարիոյ և Սերպիոյ վերաբերեալ մասանց մեծ կարեւորութիւնը։ Նօյէսթէ Ցայթունկ կ'ըսէ թէ քանի որ Ռուսիա դիւանագիտօրէն իւր ազդեցութիւնն ի գործ դնէ ի Սերպիա, Աւստրիա իւր պաշտպանողական քաղաքականութեան կեդրոն պիտի նկատէ զՊուլկարիա։

—Ի Նափոլի գործաւորական համաժողով մը բացուեցաւ, ուր ներկայ էին քանի մը երեսփոխանք, ընդ որս Պ. Պովիօ, որ Նախագահ ընտրեցաւ և Պ. Իմպրիանի՝ փոխ-Նախագահ։ Պ. Պովիօ ժողովոյն ներկայացուց զՊ. Լուիճի Փիեթրի, պատուիրակ Փարիզի և Թուլոնի «Լատին Դաշնակցութեան», որ «Վիւայ Ֆրանսա» աղաղակներով ընդունուեցաւ։ Պ. Իմպրիանի ևս «Վիւայ Թրէնթօ և Թրիէսթէ» աղաղակներով ողջունեցաւ։

ԱՂՄԿԱԼԻ ՏԵՍԱՐԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ֆրանսայի Երեսփ. Ժողովոյ յունիս 25ի նիստին մէջ, պուլանժէական Պ. Լակէռի հարցապնդումն յոյժ աղմկալի տեսարան մը յառաջ բերաւ։

Պ. Մատիւ տը Մոնժօ խօսք առած էր հարցապնդման օրաձգումը խնդրելու համար, ծանուցանելով թէ բոլոր Հանրապետականք օրաձգման կողմն են։ «Բոլոր Հանրապետականք խաբեբաներ են» (Tous les républicains sont des canailles) աղաղակեց Պօնափարթեան երեսփոխան մը, Պ. Լըժէօն։ Զայս որ լսեցին, քորսիքացի կրակոտ հանրապետականն Պ. Էմմանուէլ Արէն, գաղթային խորհրդական Պ. Էթիէն եւ Պ. Մոնի վազեցին Պ. Լըժէօնի վրայ, որոյ գլխուն փորձանք մը անշուշտ պիտի բերէին, եթէ պօնափարթեան Պ. Փօլ տը Քասանեաք անոնց առջեւ չկանգնէր՝ փակելով մուտքն այն նստարանին ուր բազմած էր Պ. Լըժէօն, և ըսելով թէ «Թիւրիմացութիւն մը կայ»։ Բայց ձախակողմեան երեսփոխանք վազեցին եկան, և ակնթարթի մը մէջ մի և նոյն կէտին վրայ համախմբեցան խումբ մը կատաղի երեսփոխանք, որք կարծես զիրար պիտի բզկտէին։ Նախագահական զանգակն աւելորդ է ըսել թէ ո՛չ ոք մտիկ կ'ընէր։ Կացութիւնն յոյժ տագնապալի էր։ Բայց ամեն կողմէ բարապանք վազեցին հասան, եւ մեծաւ դժուարութեամբ բաժնեցին պատերազմիկներն, իրենց տեղերը վերադառնալու հարկադրելով զանոնք։

Երբ քիչ շատ հանդարտութիւն վերահաստատուեցաւ, Նախագահն առաջարկեց հրապարակային պարսաւ Պ. Լըժէօնի դէմ, ժողովոյ նիստերէն առժամանակեայ վտարմամբ։ Այս պարսաւ և վտարում կ'ենթադրեն նաև նոյն միջոցին երեսփոխանական թոշակէ զրկում։ Պ. Լըժէօն բեմ ելնելով, յետս կոչում ըրաւ խոնարհաբար, ցաւ յայտնելով այնպիսի անքաղաքավար բացատրութիւն մը բերնէն փախցնելուն համար։ Բայց եւ այնպէս, ժողովն որոշեց պարսաւել յանցաւոր Պօնափարթեանն, և երեք նիստերէ մերժել զնա։ Նախագահին հրաւէրին վրայ, Պ. Լըժէօն դուրս ելաւ ժողովէն։ Ժողովն յետոյ որոշեց Պ. Լակէռի հարցապնդման յետաձգումը։

ԳԵՐՄԱՆՔ Ց'ԱՓՐԻԿԷ

Գերման պատուիրակ Հարիւրապետ Վիսման, ինչպէս յայտնի է, ռմբակոծեց և հրկիզեց զՍաատանի, քաղաքին արաբ երեւելեաց հետ ամուլ բանակցութիւններէ ետքը։ Փանկանիի Արաբներուն ևս առաջարկութիւններ ըրաւ, բայց անոնք ալ մերժողական պատասխան տուին։ Հարիւրապետ Վիսման Պակամօյօ վերադարձած է, ուր պատրաստութիւն կը կատարէ Փանկանիի վրայ քալելու համար։ Այս գերմանական արշաւանք առ այժմ հրով և սրով կը շարունակուի, և չի գիտցուիր թէ ո՛ւր պիտի յանգի։ Գերմանք կը յուսան սակայն որ Արեւելեան Ափրիկէի Արաբներն անգամ մ'ալ ահաբեկելով, դժուարութիւն պիտի չունենան իրենց գաղթականութիւնն ամուր հիմանց վրայ հաստատելու այն կողմեր։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Փիլիպէէ այս հինգշաբթի ատուր թուով կը ծանուցուի առ Մն. Օրէնբուլ.

«Փիլիպէ այցելողներ կը ճանչեն Տէերմէնտերէ գիւղը, քաղաքէն երկու ժամ հեռի, որ 1885 սեպտ. 18ի դէպքերուն կեդրոնն եղաւ։ Ֆերտինանտ իշխան, բնակչաց խնդրանօք (կ'ըսէ կէս-պաշտօնական պուլկար թերթ մը,) հրամանագիր մը հանեց, որով այդ գիւղ յետ այսորիկ Ֆէրտինանտօվօ պիտի անուանի։

«Յունիս 25էն, այսինքն ի Վիեննա Պատուիրակութեանց ժողովոյն բացումէն ի վեր, աստ զինուորական ակմբոց մէջ զրոյց կայ թէ Պ. Ստամպուլովի նախարարութիւնն ուրիշ անակնկալ բան մը կը պատրաստէ մեզ համար։ Անուան ուրիշ փոփոխում մը պիտի լինի եղեր։ Ձեզ կը ծանուցանեմ եթէ այս զրոյցք ստուգուին։»

Ի ՊԵՐԼԻՆ

Պերլինի գործաւորուհիք այս օրերս մեծ ժողով մը կազմեցին, ի Փարիզ գումարելի Գործաւորուհեաց միջազգային Համաժողովոյն պատուիրակուհիներ ղրկելու համար։ Շատ մը գերման գործաւորուհիք ներկայ գտնուեցան ժողովոյն։ Բայց ոստիկանութիւնը թոյլ չտուաւ որ ատենաբանուհիք ծանուցեալ նիւթին վրայ խօսին։ Որոշուեցաւ ուրեմն Համպուրկի դերձակներուն դժգոհութեան պատճառներուն վրայ խօսիլ, և Օր. Եակէրթ ճառեց այս նիւթի վրայ։ Բայց Տիկին Պաաքէ որ յաջորդեց նմա, արգելեալ նիւթին վրայ խօսիլ սկսաւ բուռն բանախօսութեամբ մը, և հաստատեց թէ պատուիրակուհիք պէտք է ղրկուին ի Փարիզ՝ կանայց աշխատութեան իրաւունքը փաստաբանելու, զոր շատ մը արական ընկերակցութիւնք կը ժխտեն, և պատուիրակուհի առաջարկեց զՏիկին Քլէռ Ցէթքին, ի Փարիզ հաստատեալ Գերմանուհի մը որ տետրակներ գրած է կանանց իրաւանց վրայ։

Գործաւորուհիք ոմանք այս ընտրութեան հակառակ խօսեցան, և Պերլինուհի մը Փարիզ ղրկել առաջարկեցին։ Բայց երբ կարգը քուէարկութեան եկաւ, ոստիկանութիւնն յայտարարեց թէ քուէարկութիւն կատարել պիտի չըլլայ, և հրամայեց որ ժողովը ցրուի։ Որովհետեւ ժողովն այս հրամանին հնազանդելու կը դժկամակէր, բազմաթիւ ոստիկանք ներս մտան, և գործաւորուհիները դուրս հանեցին։

ՖՐԱՆՍԱՑԻՔ ԵՒ ԳԵՐՄԱՆՔ

Գերմանաց մէջ հակաֆրանսական և հայրենասիրական զգացումները վառ պահելու համար, Վորմսի քաղաքապետութիւնն և ժողովուրդն յատուկ հանդէսով մը կատարեցին երկրորդ

—)(12)—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՕԳԴԱՎ ՖԷՕՅԷԷ

ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

ԱԶՆՈՒԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ

—Աստուած իմ, բարեկամս, ըսաւ տիկին Ֆիձ-Ժէռալ, որ քիչ մը հանդարտած էր իր աչաց առջեւ պարզուող այդ ընտանեկան տեսարանէն, հազար ներողութիւն կը խնդրեմ... Անիրաւ եղայ, կը խոստովանիմ... բայց իրօք շատ զարմանալի բաներ կան... Եթէ կ'ուզէիք Թըլսմայր մը ընել աղջիկս, պէտք է ըսէիք... Այս պարագային մէջ կանխաւ կը զրուցեն... Մնաց որ, կ'երեւայ թէ այս բանս հաճելի է իրեն, ուստի ըսելիք մը չ'ունիմ ինծի։

—Հաճելի չէ, մայրիկ, ըսաւ տիկին տը Ռիաս. բայց կը համակերպիմ։

—Էհ, աղջիկս, եթէ կը համակերպիս, ամէն բան լաւ է։

Լիոնէլ կարծեց թէ ի գին այդ թեթեւ փոթորկին շատ աժան գնած էր հանդըստեան, հանդարտութեան և առտնին կենաց այն նոր շրջանը զոր այդ առաւօտը կը բանար իր տան մէջ։ Կը տեսնէր արդէն իր առջեւ պարզուիլ անդորր և հանգըստաւէտ ամիսներ հրապուրիչ նկարի մը մէջ, որուն կեդրոնը կը գրաւէր իր կնոջ երկար աթոռը։ Պատրողական հեռապատկեր մըն էր այս։ Ընդ հուպ տեսաւ թէ լաւագոյն հնարքներն իսկ աւելորդ են, և թէ նոյն պատճառները միշտ նոյն արդիւնքն յառաջ չեն բերեր։ Տիկին տը Ռիասի ընդհանուր առողջութիւնն այնչափ զօրացած էր նախորդ տարիէն ի վեր, որ այս անգամ կրցաւ երկար ատեն հասարակութենէն ծածկել պատահական խանգարումը՝ խորհրդապահութեան և դիւցազնութեան շնորհիւ, շարունակեց հետեւիլ աշխարհային զուարճութեանց՝ ձմրան միացեալ մասին մէջ, ամառը Դրուվիլ անցուց՝ հաճոյակատար բժշկի մը խորհրդով, և երկար աթոռի դրութիւնն այն ատեն միայն ընդունեց երբ ստիպողական հարկ կար, այսինքն տասնեհինգ օր միայն։ Ի մի բան, առանց դժկամակութեան, առանց քէն պահելու, և մինչեւ իսկ տեսակ մը հըրճուանքով ցոյց տալ ուզեց գոգցես թէ մարդ մեծ բան մը չըշահիր ինչ ինչ մաքիավելական հաշուոց մէջ։

Պ. տը Ռիաս, իր կինը շատ մտացի գտնելով հանդերձ, այդ վայրկենէն գրեթէ վհատութեան մէջ ինկաւ։ Իրաւ է որ գեղահմայ պզտիկ աղջիկ մը ծնած էր իրեն. բայց իր նորածիլ ընտանեաց աճումն, այդ երկու զաւակաց պահանջած խնամքները պիտի կրնայի՞ն հանդարտեցնել իրենց մօտ աշխարհային եռանդն և իր ընտանեկան յարկին կապել զնա։ Գէթ այդպէս կը յուսար, և իրաւունք ունէր։ Տիկին տը Ռիաս պէտք եղածին չափ ժամանակ նուիրեց իր մայրական պարտականութեանց, բայց առանց դադրելու եռանդեամբ յառաջ վարելէ աշխարհային կեանքն որուն վրայ միայն ծանօթութիւն ունէր և որ կատարելապէս ուղիղ և անստգիւտ կը թուէր իրեն։

Լիոնէլ ջանաց գէթ քանի մը դարմաններ գտնել։ Ինչ ինչ արգելքներ տնօրինեց, եւ, անտրտունջ ընդունել տալու համար զայն, իր զօքանչին մեղսակցութիւնն ապահովելու ճարտարութիւնն ունեցաւ։ Այն բարձնպատակ վաճառահանդէսներէն միայն առթիւ էր յորս աշխարհի կանայք կը զուարճանան, ի նպաստ աղքատաց, ի գլուխ անցնելով վայելուչ փոքրիկ խանութներու, ուր յաճախորդները կը ձգուին իրենց գեղեցիկ աչերէն։ Տիկին տը Ռիաս, որ հրաւիրուած էր երեւիլ այդ շնորհալի վաճառողաց մէջ, իր ամուսնոյն հաճութիւնը կը թախանձէր։

—Աստուած իմ, սիրելիս, ըսաւ, ըրէք ինչպէս որ հաճոյ կ'երեւի ձեզ... կամ մանաւանդ թող մայրերնիդ որոշէ։—Տեսնենք, տիկին, յարեց խօսքը տիկին Ֆիձ-Ժէռալի ուղղելով, դուք որ պատշաճութեանց մէջ այնչափ ապահով եւ այնչափ փափուկ ճաշակ մը ունիք, ի՞նչ կը մտածէք այս մասին։

—Բայց, զաւակս, ըսաւ տիկին Ֆիձ-Ժէռալ որ այնպէս իր տկար կողմէն բռնուած էր անկեղծութեամբ խօսելու համար, ես չեմ խենդենար այդ տեսակ ցոյցերու համար։ Իմ ժամանակս այս տեսակ բան չէր ըլլար... Իրաւ է որ այժմու մանկամարդ կիներն այնչափ բարակը չեն փնտռեր։

—Կը տեսնէք ի՛նչ կ'ըսէ, սիրելիս, յարեց Պ. տը Ռիաս. է՛հ, կը խոստովանիմ որ ես ալ բոլորովին իր կարծիքէն եմ, և թէ սակմամբ պիտի տեսնէի կնոջս անունը լրագրին մէջ տպագրուած, իր արդուզարդին և փիզիքականին վրայ սիրալիր մեկնութիւններով... Ի մի բան, չեմ ուզեր որ մասնակցիք այն մարմնոյն զոր սովորաբար կը կոչեն [illegible]։ Եւ, քանի որ բանաւորութիւն ընելու ճամբուն մէջ եմ, կը փափաքէի ձեր ներկայ կամ ապագայ զուարճութեանց ցանկէն ջնջել այն ամէն բաներն որք կին մը կ'ենթարկեն այդ տեսակ անպատշաճ հրատարակութեանց... Կը տեսնեմ որ մայրերնիդ նայուածքով կը հաւանի ինծի, եւ այս բանս կը քաջալերէ զիս... կ'ուզէի ուրեմն ջնջել մեծագործ երեւոյթներն ձիարշաւուց մէջ, զաւտնախորհուրդ երեւոյթներն գայթակղիչ պզտիկ թատրոններուն մէջ, առաջին ներկայացմանց, դիմակահանդէսներու, սրահի կատակերգութեանց մոլեգնութիւնը. վերջապէս, միշտ ձեր մօրը փափուկ ճաշակին հետեւելով, ընդհանրապէս ինչ որ կը մնայ եւ ի գործ կը դնէ ձեր ազգականուհին տիկին տը Շէլ... Կ'ուզեմ նաեւ, եթէ մայրերնիդ չհակառակի, տիկին տը Շէլն իսկ ջնջել, որ իրօք չտեսնուելիք կին մը կը դառնայ... այնպէս չէ՞, տիկին։

—Աստուա՛ծ իմ, բարեկամս, ըսաւ տիկին Ֆիձ-Ժէռալ, իրաւ էր որ այդ մանկամարդ կինը շատ յառաջ կը նետուի... Մնաց որ, աղջիկս շատ բարեբաղդ չէ իր ազգականուհեաց մասին... ի բաց առեալ տիկին տը Լոռիսն, որ կատարելութիւնն ինք է... բայց այդ հեգ դքսուհին ալ բաւական անհանգստութիւն պիտի պատճառէր ինծի եթէ ես իր ամուսինն ըլլայի։

—Օ՛հ, մայրիկ, գոչեց տիկին տը Ռիաս չդիմանալով այսքան զոհողութեանց, դքսուհին թողուցէք ինծի... Քիչ մը պըչրոտ է, իրաւ է... բայց այնչափ անմեղութեամբ... և յետոյ այնչափ հաճելի է ինծի։

—Եթէ այդպէս է, ըսաւ Պ. տը Ռիաս, թողունք իրեն դքսուհին։

Եւ չյարեց թէ դքսուհին իրեն ալ հաճելի էր բաւական, թէեւ ճշմարտութիւնն այդպէս էր։

Լիոնէլ, իր կնոջ հաճոյից մէջ այդ յաջողումներն ընելէ յետոյ, ինքզինքն առաջուընէն աւելի երջանիկ զգաց։ Ինչ ինչ մասանց մէջ, իր ամուսնական արժանապատուութիւնն և դիւրազգայութիւններն աւելի լաւ պահպանուած էին. բայց իր անձնական անկախութիւնն արգելքի տակ էր միշտ։ Իրեն գծուած սահմանին մէջ իսկ, տիկին տը Ռիաս աշխարհային գործունէութեան շատ ընդարձակ ասպարէզ մը կը գտնէր, և, Լիոնէլ, հարկադրուելով հետեւիլ նմա, իր լըջութեան և բարեկրթութեան սովորական երեւոյթին ներքեւ անդ կը տանէր խորին ձանձրոյթ մը։

Ե

Այդ ժամանակները, տիկին տը Ռիաս ցաւօք բաժնուեցաւ իր ազգականուհեաց մէկէն որ ամենէն լայն ու ամենէն արժանաւոր բաժինն ունէր իր աղապատանաց մէջ։ Տիկին տը Լոռիս գնաց միանալ իր ամուսնոյն, որ նոր հասած էր Հնդկաչինաստանէն եւ մէկ երկու տարի պիտի անցունէր ի Շէրպուրկ, իր ուղեւորութեանց վերսկսելէ առաջ։ Միեւնոյն ժամանակ, տիկին տը Ռիաս, Լիոնէլի հաճոյ ըլլալու համար, զգալապէս կը ցրտացնէր իր յարաբերութիւնները տիկին տը Շէլի հետ, զոր, չմոռնանք ըսելու, իր ոխերիմ թշնամին ըրաւ։ Իր բարեկամութեան բոլոր եռանդը նուիրեց ուրեմն տ'Էսքրէնի դքսուհւոյն, որուն մեղկ շնորհքը, գրաւիչ մելամաղձութիւնն եւ գերագոյն վայելչութիւնը մեծ հրապոյր ունէին իրեն համար։ Այդ տարին հասարակաց օթեակ մը ունեցան Օբէրային եւ Ֆրանսէի մէջ։ Դքսուհին ալ նոյն համակրանքը կը տածէր իր ազգականուհւոյն նկատմամբ։ Սիրելաբար կ'զբաղէր այդ երիտասարդ ամուսնացելոց երջանկութեամբ. Մաւին կը հարցափորձէր, նորա վրայ յառելով յաւերժական տխրութեամբ մոլորուն իր գեղեցիկ աչերը.

—Ամուսինդ շատ կը սիրէ՞ զքեզ, սիրելիս։

—Այնպէս կը կարծեմ, կ'ըսէր տիկին տը Ռիաս։

—Բայց տարփանքով կը սիրէ՞։

—Այո, այդպէս կը թուի ինծի։

—Ուրիշ բանի չէ՞ս բաղձար։

—Ո՛չ։

—Խե՛ղճ հրեշտակ, երջանի՛կ ես։

Եւ մայրաբար կը համբուրէր նորա ճակատը։

(Շարունակելի)

հարիւրամեակն 1689ի այն չարաշուք դէպքին երբ Ֆրանսայի զօրքերն ի մոխիր դարձուցին գերման Փալաթինան և ընդ նմին Վորմս քաղաքն։ Այս հանդիսի առթիւ, քաղաքապետութիւնն յատկապէս խմբագրուած ու տպագրուած տետրակ մը բաշխել տուաւ նախակրթարանաց աշակերտներուն, Վորմսի քայքայման ու հրկիզման պարագայները պատմող, որպէս զի նոր սերունդը լաւ մը տպաւորուի ատելութեան զգացմամբ այդ բարբարոսութեան հեղինակ եղող ազգին դէմ։ Նոյն առթիւ շատ մը Վորմսցիք ուղերձ մը ղրկեցին Պիզմարք իշխանին, շնորհակալութիւն յայտնելով որ ինք եւ Գերմանաց հայրենասիրութիւնը չարժած է մանաւանդ Ռոյխսթակի մէջ արտասանեալ այն բանախօսութեամբն յորում կ'ըսէր. «Մեք Գերմանքս Աստուծմէ կը վախնանք, և ուրիշ ո՛չ մէկէ կը վախնանք աշխարհիս վրայ։» Պիզմարք Իշխան սապէս պատասխանեց.

«Շնորհակալ եմ Վորմսի բնակչացդ առ իս ղրկած բարեկամական ողջոյնին համար։ Իցէ՛ թէ 1689ի եղելութեանց պատմութիւնն ամեն Գերմանի յիշեցնէ թէ ինչպէս Գերմանիա նուաստացած էր երբեմն իւր տկարութեան և իւր ներքին երկպառակութեանց պատճառաւ։» ՖՈՆ ՊԻԶՄԱՐՔ

ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Պրուսէլ, 25 յունիս. — Զրոյց կայ թէ ռուս կառավարութիւնը կը խորհի մէկ միլիառ ֆր. ի փոխառութիւն մը կնքել Փարիզի և Պրուսէլի դրամատուներէն և սեղանաւորներէն։

—Փեթերսպուրկ, 27. —Ռուս կառավարութիւնը կը բանակցի նոր փոխառութիւն մը կնքելու համար ի Փարիզ և ի Պրուսէլ։

ՍԵՐՊԻԱ

Պելկրատ, 27. — Աղեքսանդր թագաւոր, խնամակալութեան անդամք և Մետրապոլիտ Միխայել յոյժ խանդավառ ընդունելութիւն մը գտան ի Քրակույեվաձ։

ԵԳԻՊՏՈՍ

Յունիս 25 թուով Ռիւթէրի հեռագիր մը կը ծանուցանէ թէ ֆրանսական կառավարութիւնը չի հաւանիր Եգիպտոսի Առանձնաշնորհեալ Պարտուց տոկոսին ընդչափմամբ նոր փոխառութեան մը ի հրապարակ հանուելուն, եթէ անգլ. կառավարութիւնը բացորոշ երաշխաւորութիւն չտայ իւր զօրքն Եգիպտոսէն հանելու։

Ֆրանսայի այս յայտարարութեամբ Եգիպտոսի առաջադրեալ սեղանաւորական մեծ գործողութիւնը ծանրապէս կը վտանգի։ Հետեւապէս, Լոնտոնի հրապարակին վրայ եգիպտական թուղթերը կորեցան։ (Սթանպուլ)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԲԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

Բաղ. ժողովոյ միացեալ երկու անդամոց համեմատական քուէարկութիւնը կատարուեցաւ երէկ Ազգ. ժողովոյ խորհրդարանին մէջ, ի ներկայութեան Ազգ. ժողովոյ դեր-Ատենապետին և քննիչներու։

Քուէատուփը բացուեցաւ ժամը 6½ին։ Յիսուն երկու երեսփոխանք մասնակցած էին քուէարկութեան և քուէից առաւելութիւն ստացան. քուէ

Մեծ. Խասեան Յովհաննէս էֆ. 45
» Հալաճեան Մելքոն էֆ. 24

Ընտրութեան տեղեկագիրը նոյն հետայն ստորագրուելով ղրկուեցաւ առ Ս. Պատրիարք Հայրն։

Ուսումն. Խորհուրդն երէկ ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան, ընդ ատենապետութեամբ Յովհ. Թիրեաքեան էֆէնտիի, և զբաղեցաւ ազգային վարժարանաց համար պատրաստուած ներքին կանոնագրի ծրագրովը, յորում մանրամասնօրէն բացատրուած են թէ՛ ուսուցչին և թէ՛ ուսանողին պարտքերը։

Սեբաստիոյ վարժարանաց անբարեկարգութեան դէմ դժգոհութեան գիր հասած ըլլալով ի Պատրիարքարան, որոշուեցաւ վիճակին Առաջնորդ Սրբազանին ուշադրութիւնն հրաւիրել այս մասին։

Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց մէջ ժառանգաւորաց նոր վարժարան մը բացուած ըլլալով, որոյ հնգամեայ նիւթական մատակարարութիւնն ստանձնած են Աղն. Խասեան եղբարք, խորհուրդն յիշեալ վարժարանի ընթացքի կանոնագիր մը հաստատեց եւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ալ հաստատեց ու յղեց զայն ի Կեսարիա։

Վաւերացուց Պօղաճեան Տիգրան էֆէնտիի թուաբանութեան դասագիրքն, եւ արտօնեց անոր իններորդ տպագրութիւնը։

Խորհուրդը վկայագրեր տուաւ նաև քանի մը ուսուցչաց, և զբաղեցաւ դասատուաց վերաբերեալ կրթական խնդիրներով։

Երեւանեան Տիրան էֆ. Նազարեանի առաջարկն ուսումնասիրելու և առ Ազգ. ժողովն տեղեկագրելու պաշտօն ունեցող Յանձնաժողովը գումարեցաւ երէկ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ։

Յանձնաժողովոյ անդամներէն ներկայ էին Գեր. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, Արժ. Յովհ. վարդ. Արշարունի և Մեծ. Մարկոս էֆ. Աղաբէգեան. իսկ բացակայ էր Վսեմ. Ստեփան փաշա Ասլանեան։

Յանձնաժողովոյ խորհրդածութեանց արդիւնքն այն եղաւ թէ՝ բստ որում Նազարեան էֆէնտիի առաջարկն եթէ ընդունուի, լոկ Պոլսոյ եկեղեցիներուն համար չպիտի գործադրուի այլ նաև Թուրքիոյ բոլոր հայ եկեղեցիներուն, հետեւաբար պէտք է նախապէս կարծիքն առնուլ Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց, Երուսաղէմի վանուց, ինչպէս նաև միւս բոլոր վանքերուն և եկեղեցիներուն։

Յանձնաժողովը նոյն իմաստով տեղեկագիր մը պատրաստեց Ազգ. Ժողովոյ ներկայացնելու համար, և իւր պաշտօնն աւարտած համարեց։

ՇԱՀԼԱՄԵԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Վաղը տեղի կ'ունենայ, Բերայի Նոր Թատրոնին մէջ, Պ. Ներսէս Շահլամեանի նուագահանդէսն, աջակցութեամբ [illegible] ընկերութեան և արուեստասիրաց ոմանց։ Նախերգն մինչեւ Արաքս, հայազգի նշանաւոր երգիչն համակրելի ընդունելութիւն գտած է միշտ և Վասփորի ափանց վրայ չէ որ այդ եռանդագին ընդունելութիւնը պիտի պակսի նմա։ Երբ Պ. Շահլամեան Պետրոսպուրկէն կը մեկնէր ի Կովկաս, [illegible] անդամ և [illegible] Պ. Փիլիբով յանձնարարական նամակ մը տուած է նմա Կովկասեան ընդհանուր կառավարչապետ Տոնտուքով-Քորսաքով իշխանին ուղղեալ, յորում կ'ըսէ ի մէջ այլոց. «Վստահօրէն կը յանձնարարեմ զնա ձեր բարեհաճ ուշադրութեան, իբր անձնաւորութիւն մը որ պիտի ունենայ փայլուն ապագայ և թերեւս համաշխարհային հռչակ։»

Այսպիսի արուեստագէտ մըն է որ վաղը պիտի ներկայանայ հայ հասարակութեան։ Թէեւ Պ. Շահլամեանի համբաւն հրապոյրն և յայտագրոյն ճոխ պէսպիսութիւնն ինքնին հաւաստիք են յաջողութեան, սակայն պէտք կը համարինք յայտնել թէ Պ. Շահլամեան իրաւունք ունի իւր տոհմակից հասարակութենէն ստանալու այն եռանդոտ ընդունելութիւնը զոր օտարք շռայլած են իրեն։

Տոմսակները վաղը առաւօտէն կը ծախուին Նոր Թատրոնի դուռը։

ՍԱՀԱԿԵԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Վաղը, ի պարտէզն Ս. Փրկչի հիւանդանոցին, տեղի պիտի ունենայ հանդէս մը որ միշտ եզական եղած է իւր տեսակին մէջ։ Սամաթիոյ Սահակեան վարժարանի նախկին սաներն են միայն որ ամեն տարի կը միանան և կ'ամրապնդեն իրենց եղբայրակցական այն կապն որով իրարու միացած են դպրոցի դրասեղաններուն վրայ, և օրինակ մը կը հանդիսանան այն տղայոց որք այսօր դպրոցի սաներն են և վաղը պիտի լինին իրենց հետեւողներ։

Սահակեան նախկին սանուք օրինակ կրնան հանդիսանալ ո՛չ միայն սամաթիացի աշակերտներուն այլ նաև ուրիշ շատ թաղերու և գաւառներու։ Իրենք իրենց մէջ միացած, կը խնամեն նիւթապէս և բարոյապէս իրենց թաղի երկսեռ վարժարանն և կ'աշխատին առ հասարակ թաղին յառաջադիմութեան։ Եթէ ամեն թաղի ու գաւառի նախկին աշակերտք հետեւին այս օրինակին, այլ եւս մեր դպրոցներն ու եկեղեցիներն ո՛չ անշարժ կալուածքի կարօտ պիտի ըլլան և ո՛չ այլ դժուար կացութեան մէջ պիտի գտնուին։

Կը յուսանք որ Հայոց խուռներամ բազմութիւն մը վաղը պիտի պատուէ Սամաթիացիներն, որք միշտ բուռն եռանդեամբ նախաձեռնիչք եղած են ազգային ամեն գործերու և որոց վարժարանն իւր հիմնարկութեան առաջին օրէն ի վեր սնուցած է իւր աշակերտները ոչ միայն լուրջ ուսումով այլ և՛ որ յաւագոյնն է՛ ազգային դաստիարակութեամբ։

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

ԸՍՏ ԵՒՐՈՊԱՑՒՈՑ

Կ. Պոլսէն	10 30	11 30	2 00	3 00
Գում գափուէն	10 39	11 39	2 10	3 09
Եէնի գափուէն	10 43	11 43	2 14	3 13
Սամաթիայէն	10 49	11 49	2 20	3 18
Եէտի-գուլէէն	10 54	11 54	2 26	*3 22
Հանդիսավայր	10 58	11 58	2 30	3 26

ԸՍՏ ՏԱՃԿԱՑ

Կ. Պոլսէն	2 49	3 49	6 19	7 19
Գում գափուէն	2 58	3 58	6 29	7 28
Եէնի-գափուէն	3 02	4 02	6 33	7 32
Սամաթիայէն	3 08	4 08	6 39	7 37
Եէտի-գուլէէն	3 13	4 13	6 45	7 41
Հանդիսավայր	3 17	4 17	6 49	7 45

Վերյիշեալ 4 կառախումբերն զատ, 18 կառախումբք ևս կան, որք Կ. Պոլսէն մինչև Եէտի-գուլէ միայն կ'երթան սոյն կայարաններն հանդիպելով։ Դարձը Եէտի-Գուլէէն է։

Վաղամեռիկ երիտասարդի մը մահուան օրը, Կարապետ էֆ. Գարադաշ իր որդւոյն վշտերն արտայայտած է բանաստեղծութեամբ մը զոր կ'արտատպենք Գ. երեսի մէջ։ Գարադաշ էֆ. իր աշխատասիրութիւններն, հեղինակութիւն թէ թարգմանութիւն, ընդհանրապէս գրաբար լեզուաւ ըրած է. այս եղերերգին մէջ ցոյց կուտայ թէ նոյնքան ճարտարութեամբ կարող է ի գործ ածել աշխարհաբարն ևս։ Քերթուածը գրական փափկաճաշակներուն պիտի պատճառէ հաճոյից ամենէն [illegible], — տխրութեա՛ն հաճոյքը։

Ստացանք Ց. Թ. Գույաճեանի բանաստեղծութեանց հաւաքածոյն, ԱՌԱՋԻՆ ՄՐՄՈՒՆՋՔ, 1885 88։ Պերճերեան մաքուր տպագրութեամբ պատկերազարդ հատոր մըն է, ի գին 10 ղրշ։

Դպր. Տիհնանց ընկերութեան կողմէ կը խնդրուի մեզնէ ուղղել Դարոքեցի հանգանակութեան ցանկին մէջ սպրդած սխալ մը. Միքայել էֆ. Մանճեան նուիրած է 54 ղրշ. եւ ոչ 24։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ՍԷԼԱՄԼԸՔԸ

Երէկի Սէլամլըքի արարողութիւնը տեղի ունեցաւ Ճաղը Թէքքէին կից Եըլտըզըրու մզկիթին մէջ։

Այս արարողութիւնը դիտելու համար պահականոցի յատուկ հիւրանոցին մէջ կը գտնուէին Միացեալ-Նահանգաց նոր դեսպան Պ. Սոլոմոն Հիրշ և դեսպանատան առաջին քարտուղարը, պապական նուիրակն, Իտալիոյ գործակատարն և դեսպանատան առաջին քարտուղարն, Իտալիոյ Երեսփ. ժողովոյ անդամ մը, և 20-30 պատուաւոր զբօսաշրջիկներ, որք յանձնարարեալ էին Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Գերմանիոյ դեսպանատանց կողմէ։

ՄԱՃԱՐ ՓԱՇԱ

Քաղաքապետ Մաճար փաշա երէկ անձնական անհանգստութեան պատճառաւ Սէլամլըքի արարողութեան ներկայ չգտնուելով, Վեհ. Սուլթանը սենեկապետ Արիֆ պէյի միջոցաւ Ն. Վսեմութեան առողջութիւնն հարցուց և իւր կայսերական բարեւն հաղորդեց։

ՀԱՅՔ ԵԳԻՊՏՈՍ

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Երէկ իրիկուն ստացանք թուրքերէն հեռագիր մը որոյ թարգմանութիւնը կը դնենք ստորեւ։ Նոյնն մէկ մէկ պատճէնն ալ հրատարակուած է այս առաւօտեան Թարիքի եւ Թէրճ. Հաքիքաթի մէջ.

«Բոլորովին անհիմն է Պուքրէշի Աքթուալիթէ լրագրին 7րդ թուոյն մէջ երեւցած այն հրատարակութիւն թէ հայ երիտասարդ մը վրէժխնդրութեան համար լեռը տարուեր և սպաննուեր է։

«Այս լուր եթէ պարզապէս սխալ մը չէ, պէտք է ենթադրենք թէ դիտմամբ յերիւրուած բան մ'է կայսերական կառավարութեան հաւատարիմ հպատակութենէն պաղեցնելու համար հայ ծառայներն որք սրտանց յարեալ են Օսմանեան Տէրութեան, և զանոնք զրկելու համար Օգոստափառ վեհապետին շնորհներէն։

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՆՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Թուղթ մը կողմնակալու համար մաս առ մաս վաճառուած խոպան հողերէն շինութեան տրամադրութեան համար 100ին 10 ղրուշ տուրք կ'առնուի։ Նկատելով որ այս տրամադրութիւն խոպան հողերու արժէքը ստանալուն և շինութեանց աւելնալուն արգելք կը լինի, Պետական Խորհրդոյ որոշմամբ, զոր Վեհ. Սուլթանը վաւերացուցած և ներքին գործոց նախարարը գաւառներուն ծանուցած է, այս տուրք ջնջուեցաւ։ Ի Կ. Պոլիս և ի գաւառս թաղ կամ գիւղ կազմելու համար կամ այգիներու և պարտէզներու յարակից և ուրիշ տեղեր խոպան հողերու վրայ շինութիւնք արտօնութեան համար ո՛և է տուրք զերծ են։

Միայն [illegible] վարձ հողերուն համար 1000 ղրուշին 10 փարա և տասանորդ վճարող պետական հողերուն և [illegible] ունեցող վարձիններուն համար 1000 ղրշին 30 փարա [illegible] և [illegible] պիտի յաւելուն բստ [illegible] տրամադրութեանց։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Երկրագործական Դրամատան ճիւղ մը բացուած է Սիրոզի մէջ, տնօրինութեամբ Սէլամի զատէ Ալի պէյի, երբեմն Նախապաշ գաւառին երկրագործական մասնակին։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Այս առաւօտ մայրաքաղաքս հասաւ Պուլկարիոյ արքունական պահապան զօրաց նուագախումբն, որ կը բաղկանայ 35 երաժիշտներէ։ Նուագածուք կը կրեն Պուլկարական համազգեստ և Հէօկ երաժշտապետին վարչութեան ներքեւ կը գտնուին։ Այս արուեստագէտք որք գերմանական դեսպանատան յանձնարարեալ են, քանի մը հանրային նուագահանդէսներ պիտի տան մայրաքաղաքիս մէջ։

ՈՒՐԿԱՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Նման դուցէ կէս դարէ ի վեր չտեսնուած բուռն փոթորիկ մը ծագեցաւ այս առաւօտ ժամ 10ին, ճշմարիտ ուրական մը, որ կարծես չէր կրնար [illegible]։ Յանկարծ օդը մթագնեցաւ, և հզօր քամին արթնցող Պոլսոյ հասարակութիւնն այս սեւաթոյր և արշաւասոյր ամպերէն աչքերնին հեռացնելու ժամանակ չունեցած, կայծակ, փայլակ, տեղատարափ, կարկուտ և այն ամեն ահելի բաներ զորս ամպեր կրնան արտադրել և երկրիս վրայ ղրկել՝ աննկարագրելի աղմուկով մը ինկան տուներուն, պարտէզներուն և մ. Պոլսոյ պատող ջուրերուն վրայ, յորս բազմաթիւ վնասներ պատճառեցին։ Ամենէն աւելի վնասուեցան հիւսիսային քամին առջեւ բաց և անպաշտպան գտնուող տեղերն՝ Ալյուպէս, ի Խասգիւղ, Պատէմիքի և Զրդալըրի բարձանց վրայ, շատ մը տուներու պատուհանները և ապակիները կոտրեցան, ծառեր տապալեցան տուներու տանեաց վրայ, զորս աւելի կամ նուազ խորտակեցին, ծխնելոյզներ ինկան, պարտէզները գրեթէ բոլորովին խանգարեցան, և քանի մը փողոցներ կղմինտրներու բեկորներով լցան։ Ի Գասըմփաշա, հսկայ նոճիներ տուներու վրայ իյնալով, այլ և այլ վնասներ պատճառեցին։ Փոթորիկն քիչ յառաջ Հալիճը [illegible] նաւամատոյցէն մեկնած նաւավարի մը նաւակը շրջելով, ինք խեղդուեցաւ, և նաւակը ծովեզր ինկաւ։ Ուսկիւտարի քանի մը շոգենաւեր որք Նէյալի առջեւ կապուած էին գիշերային [illegible] պատճառաւ, իրենց պարաններ խզելով, հովին առջեւ ինկան և բաւական ատեն ծովուն վրայ, բայց բարեբախտաբար մարդու վնաս չեղաւ։ Սկիւտարի նաւամատոյցէն բացուած մակոյկ մը, որոյ մէջ քանի մը հոգիք կային, ընկղմեցաւ, և կը լսենք թէ միայն նաւավարը կրցեր է ազատիլ։ Կ'ըսուի մանաւանդ թէ Բէժիի ծխախոտի գործարանին հրեայ և յոյն գործաւորուհիներ տանող նաւակ մ'ըն կղզեր է։ Մէկ քանի [illegible] կապերնոյ [illegible] խորտակեցան, և կիսաւարտ մի քանի շէնքեր փլան, ևն. ևն.

Բարեբախտաբար, փոթորիկն հազիւ 5—10 վայրկեան տեւեց։ Եթէ աւելի երկարեր, անշուշտ շատ աղետաբեր կը լինէր մայրաքաղաքիս և շրջակայից։ Արդէն կ'ըսուի թէ պտղատու ծառերն և բանջարեղէնք ամեն կողմ ծանրապէս վնասուած են։

ՀՐԴԵՀԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքիս մէջ հաստատեալ երկու անգլիական ապահովագրական ընկերութեանց մէկ անհաման վեհանձնութեան օրինակը կը հաղորդեն մեզ, զոր կ'արժէ ի հրապարակ հանել։ Անցեալ տարւոյ մայիս 19ին, ի Սէլանիկ հաստատեալ Վսեմ. Համտի պէյ, մեծահարուստ վաճառական, Նօրթ Պրիթիշ էնտ Մըրգէնթայլ և Նօրթէրն ընկերութեանց ապահովագրել տուած էր մեծաքանակ վաճառք որք ամբարեալ էին ի Պոլիս, Ախըր-Գափու, համբարանոցի մը մէջ։ Ապահովագրութիւնը մէկ տարուան համար էր մուրհակին լրանալէն հինգ վեց օր յառաջ տեղեկութիւն զրկուեցաւ Համտի պէյի, այդ ընկերութեանց գործակալ Գառնիկ էֆ. Սերոբեանի կողմէ։ Բստ մեր տեղեկութեանց, Ընկերութիւնը կամ Գործակալութիւնը պարտաւոր չէ պայմանաժամն լրացման լուրն հաղորդել, և ամբողջ պատասխանատուութիւնն ապահովագրելոյն վրայ կը մնայ։ Հետեւաբար, այս պարագային մէջ, քաղաքավարութիւն մըն էր այս։ Մուրհակին լրման օրը կիրակի էր և մինչև շաբաթ իրիկուն Համտի պէյի կողմէ ո և է լուր ղրկուած չըլլալով Գործակալութեան՝ ապահովագրութեան նորոգման համար, մուրհակը դադրեցաւ գոյութիւն ունենալէ կիրակի 19 մայիս, կէս օրէն չորս ժամ ետքը։ Նոյն իրիկունը, հրդեհ ծագեցաւ մթերանոցին, և յիշեալ ապահովագրեալ ապրանքներն ամբողջովին ոչնչացան։ Ապահովագրութիւնը քանի մը ժամէ ի վեր լրացած ըլլալով, Համտի պէյ յա՛ւ օրինական ո և է իրաւունք չունէր Ընկերութիւններէն պահանջելու իր վնասին հատուցումը. բայց, յայտնելով թէ հաստատապէս որոշած էր նորոգել ապահովագրութիւնը, և թէ իր կամքէն անկախ պատճառներով չէր կրցած ժամանակին կատարել զայն, Ընկերութիւնք, իրենց սովորական վեհանձնութեամբ, որոշեցին հատուցանել Համտի պէյի վնասն, և ապահովագրութեան գումարը տրուեցաւ նմա քանի մը օր առաջ, որպէս թէ մուրհակը վերանորոգուած ըլլար նախկին պայմաններով։

Նօրթ Պրիթիշ էնտ Մըրգէնթայլ և Նօրթէրն ընկերութեանց վեհանձնութիւն այս գործոյն մանաւանդ, արժանի է յիշատակութեան զի հակապատկեր մը կը կազմէ ուրիշ ընկերութեանց ոմանց, որք միշտ պատրաստ են օրէնքին շնորհած ամենադոյզն պատրուակէն օգտուելու՝ իրենց յաճախորդաց պահանջումներէն խոյս տալու համար։

ՑՈՒՍԱՀԱՏ ԹՐՔՈՒՀԻ ՄԸ

Երէկ միջօրէին հինգ վեց թուրք տիկնայք 18 ամեայ գեղեցիկ աղջկան մը հետ Մեսարպուրնուէն Շիրքէթի 18 թիւ շոգենաւը նստան։ Շոգենաւը նաւամատոյցէն քիչ մը բացուելուն պէս, աղջիկն ինքզինք ծով նետեց նաւուն [illegible] կողմէն։ Բարեբախտաբար, նաւապետ Զախարաքի էֆէնտի տեսաւ, և իւր հրամանաւ նաւաստիներէն Աչմէտ աղա չուան մ'ի ձեռին ծով նետուելով, յաջողեցաւ ազատել աղջիկն, որուն համար կ'ըսուի թէ ծանօթ անձի մը ազախինն է (Թուրք) և մտամոլորութեան ենթակայ եղեր է վերջերս։

ՕՍՄ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱ

Օսմ. կայս. Պանքայի բաժնետերաց Ընդհանուր ժողովն, որ գումարեցաւ ի Լոնտոն ամսոյս 26ին, որոշեր է 1888ի տարեշրջանին համար 10 շիլինի շահաբաժին տալ մէն մի արժէթուղթի վրայ։

Այս վճարումն տեղի պիտի ունենայ յառաջիկայ յուլիս 1ին ի կեդրոնատեղին Պանքային ի Կ. Պոլիս, Լոնտոն և Փարիզ, ինչպէս և ուրիշ գործակալութեանց ու մասնաճիւղերուն մէջ, ի փոխարէն թիւ 27 և 28 կտրօններուն։

Կ. Պոլիս, 27 յունիս 1889

Երէկ ևս Մախսուսէի [illegible] և [illegible] շոգենաւք Գորա Պիզայէն 1,270 ոչխար բերին մայրաքաղաքս։ Այս ժամանակներ անշուշտ կ'ազդեն մսավաճառներու հրապարակին վրայ, բայց լաւ ոչխարի միսը (Պէյլէրեմ) վեց ղուրուշէն պակաս չի տրուիր տակաւին։

—Իզմիրէ կը գրուի թէ նոր կուսակալ Խալիլ Րէֆաթ փաշայի պաշտօնը ծանուցանող կայսերական Հրովարտակն երկուշաբթի մեծ հանդիսիւ կարդացուեր է կառավարական ապարանքին մէջ։

—Այս գիշեր չորս չարագործներ ի Ֆընտըգլը տուն մը մտնել կը փորձէին, բայց Պէշիքթաշի ոստիկանութեան հրամատար Հասան փաշա կանխաւ իմանալով, ոստիկաններ ղրկեց որք յաջողեցան ձերբակալել զանոնք։

—Գերմանական հիւպատոս Պ. Ժիլէ, որ Եօրինէ եւ Փիլիպէ գնացած էր, մայրաքաղաքս վերադարձաւ։

—Շիշլիի Յունաց գերեզմանատան մէջ հանգուցեալ Ժորժ Զարիֆիի յիշատակին կառուցեալ յիշատակարանը հոյակապ շինուածք մըն է։ Յիշատակարանին վրայ քանդակուած է Ժորժ Զարիֆիի արձանը պառկած մէկ ձեռքն հանգչեցուցած բարձի մը վրայ, միւսովը գիրք մը բռնած։ Իր դիմաց կը գտնուի արձանն քօղածածուկ կնոջ մը, որ տղու մը ձեռքէն բռնած է. տղան պսակ մը կը մատուցանէ։ Գթութեան մարմնաւորումն է այս, խեղճ տղայ մը առաջնորդելով իր բարերարին մօտ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 17 յունիս
Դահեկան

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Տիւզ. Ս. Սէրի		17 23
Փօրթայի գոց. եւեն վերջը	»	17 23
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	17 24
Կէս օրին	»	17

ԽԱՌՆԻՓՐԱԶԸ ՏԱԽԻԼԻ

Երէկ երեկոյ	43 36
Այս առաւօտ	43 34
Կէս օր	44 4

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՅ

Փոխառութիւն	A. Սէրի	28
»	B. »	16 20
»	C. »	17 24

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ.	Լր.	4 24
Քրէտի Ժէնէրալ	Օսմ.	»	9 13
Պանք տը Գօնսդ.	»	»	7 15
Սօս. Շոմէն է վոյեռ	»	»	4 33
Թրամուէյ	»	»	462 ½
Թունէլի երկաթուղի	Ֆր.		58 75
[illegible]	»		— —
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»		103

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 28 Յունիս ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ		98 5/16
Օսմ. »	Սէրի Դ. բացուեցաւ	16
» »	» գոցուեցաւ	16
» »	» Ա.	28
» »	» Բ.	16 ½
» »	» Գ.	15 7/8
Օթոման 1871		91 ½
Փոխառութիւն 1877		99 ½
Պանք Օթոման		10 3/4
Ռուսական փոխառ. 1873		100
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)		90 ½
» առանձն. (Բրիվիլէժիէ)		103 3/8
Տայրա Սանիէ		83 ½
Տօմէնիալ (փոխառ. Ռոշիլտ)		102 ¼
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 386

Վիէննա, 28 Յունիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	119 60
Օսմանեան երկաթուղի	32 60
» Լէժիի բաժնեթուղթք	109

Բարիզ, 28 Յունիս ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 ½ %	104 35
» 3 %	84 42 ½
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	16 20
» » գոցուեցաւ	16 20
» » » Բ.	— —
» » » Գ.	16 20
Օսմանեան երկաթուղի	59 12 ½
» Լէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթոման	522 50
Քրէտի Լիոնէ	670
» Ֆօնսիէ	1307 50
Գոնգուար տ'Էսգոնթ	95
Սուէզի ջրանցք	2352 50
Ռուսական 5 % 1877 ի	— —
Իտալական Ռանթ	96 80
Սպանիական (արտաքին)	75 7/8
Եգիպտական միացեալ	454 37 ½
Բրիօրիթէ Թիւրք	450
Հելլենական 5 %	475
Չեք Լոնտրայի վրայ	25 16

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԲԵՐԱՆԱՑԻ ՔՆՆՈՒԹԵԱՆՑ ԱՐԱՄԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԳԱՏԸԳԻՒՂ

ՅՈՒՆԻՍ 19 — ՅՈՒԼԻՍ 8

Բշ. Յունիս 19. Զափագիտութիւն Ա. Գ. կարգք (աղջիկ), Դ. Ե. Զ. կարգք (մանչ), Աշխարհագրութիւն Բ. Դ կարգ աղջիկ Ա. Բ. Գ. կարգ (մանչ).

Գշ. Յունիս 20. Գաղղիերէն Ա. կարգ (աղջիկ) Դ. Ե. Զ. կարգ մանչ, կրօնք Ա. Բ. կարգ (աղջիկ), Ա. Բ. Գ. կարգ (մանչ).

Դշ. Յունիս 21. Պատմութիւն Ե. կարգ (աղջիկ), Դ. Զ. կարգ (մանչ), Իրագիտութիւն Ա. Բ. կարգ աղջիկ, Բ. (ընտր.) Բ. Ա. կարգ (մանչ).

Եշ. Յունիս 22. Գաղղիերէն Դ. Ե. կարգ աղջիկ, Ա. Բ. կարգ մանչ, Անգղիերէն Դ. Ե. Զ. կարգ (մանչ).

Ուր. Յունիս 23. Հայերէն Ա. Բ. Գ. Դ. կարգ (աղջիկ), Տաճկերէն Ա. Բ. Դ. Ե. Զ. կարգ (մանչ).

Բշ. 26 Յունիս բնագիտութիւն Ե. կարգ աղջիկ, Ե. կարգ մանչ, Տարրաբանութիւն Զ. կարգ (մանչ), Բնապատմութիւն Դ. կարգ աղջիկ, Դ. կարգ (մանչ).

Գշ. Յունիս 27. Կրօնք Դ. և Ե. կարգք (աղջիկ) Դ. և Ե. կարգք, (մանչ) Հայերէն Զ. կարգք (մանչ).

Դշ. Յունիս 28. Փիլիսոփայութիւն Զ. կարգք (մանչ), Պատմութիւն Դ. կարգք (աղջիկ) Դ. Ե. կարգք (մանչ).

Ուր. Յունիս 30. Հայերէն Ե. կարգք (աղջիկ), Դ. Ե Զ. կարգք (մանչ), Գաղղիերէն Բ. Գ. կարգք (աղջիկ), Թուաբանութիւն Բ. (ընտր.) Ա. Բ. կարգք (մանչ).

Շր. Յուլիս 1. Մարդակազմութիւն Ե. կարգք (աղջիկ), Ե. կարգք (մանչ), Թուաբանութիւն Բ. Գ. Դ. կարգք (աղջիկ) Ա. Բ. Գ. կարգք (մանչ), Աշխարհագրութիւն Գ. Դ. կարգք (աղջիկ).

Շր. Յուլիս 8. Գրագիտութիւն և ընթերցումն չարադրութեանց Բ. Գ. Դ. Ե. և Զ. կարգաց (մանչոց և աղջկանց).

Կէս օրէ յառաջ քննութիւնք պիտի կատարուին աղջկանց դպրոցն և սկսին ժամ 1 ½ին իսկ կէս օրէ վերջ մանչերուն և վերջանան 10 ½ին։ Միջօրէին 1 ½ ժամ դադար պիտի տրուի։

Ձեռագործք, գեղագրութիւնք և գծագրութիւնք միշտ ի տես են։

ՄԵՋՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մեզպուրեան վարժարանի գրով և բանիւ հարցաքննութիւնք կ'սկսին ամսոյս 19ին Բշ. և կ'աւարտին 28 Դշ.։ Վարժարանն այս տարի կ'ընծայէ դարձեալ Ազգին 8 ընթացաւարտ Սանուհի։

Ժամանակացոյց

Բշ. 19 Յունիս.— Ա. տարի, Հայերէն. Բ. տարի, Աշխարհագրութիւն. Գ. տարի, Ֆրանսերէն. — Կէս օրէ յետոյ. Ե. տարի, Գրահաշիւ. Դ. տարի Ֆրանսերէն. Գ. տարի, Թուագիտութիւն.

Գշ. 20 Յունիս.— Ե. տարի, Ֆրանսերէն գրագիտական բացատրութիւնք. Բ. տարի, Հայերէն. Ա. տարի, Աշխարհագրութիւն.—Կէս օրէ յետոյ. Գ. Դ. տարիներ միացեալ, բարոյական և Ս. Գիրք. Բ. տարի Ֆրանսերէն, Դ. տարի, Հայերէն.

Դշ. 21 Յունիս.— Բ. տարի Թուագիտութիւն. Դ. տարի Ֆրանսերէն. Բ. տարի, Ֆրանսերէն.—Կէս օրէ յետոյ. Ա. տարի, Թուագիտութիւն. Գ. տարի, Ֆրանսերէն. Ե. տարի Ֆրանսերէն փոխադարձ Թարգմանութիւնք.

Եշ. 22 Յունիս.— Գ. տարի Հայերէն. Ա. տարի Ֆրանսերէն. Բ. տարի, Հայ. և Ֆրան. Արտասանութիւնք.—Կէս օրէ յետոյ Ե. տարի, Բուրաստան. Գ. Դ. տարիներ միացեալ, Ընդհ. Պատմութիւն. Ե. տարի, Ֆրանս. Քերականութիւն.

Ուր. 23 Յունիս.— Ե. տարի, Ֆրանս. Շարադրութիւն. Գ. տարի, Աշխարհագրութիւն. Ա. տարի, Իրագիտութիւն.— Կէս օրէ յետոյ. Ե. տարի, Տիեզերագրութիւն. Դ. տարի Բնական Աշխարհագրութիւն. Բ. տարի Մարդակազմութիւն.

Բշ. 26 Յունիս.— Գ. տարի Հայ. և Ֆրանսերէն Արտասանութիւնք. Բ. տարի, Հայերէն Շարադրութիւն. Ե. տարի, Իմաստասիրութիւն.—Կէս օրէ յետոյ. Դ. տարի, Ուսողութիւն. Ե. տարի, Բնագիտութիւն. Գ. տարի, Ֆրանս. Քերականութիւն և Ուղղագրութիւն.

Գշ. 27 Յունիս.— Ա. տարի, Կրօնք և Սրբազան Պատմութիւն. Բ. տարի, Ազգ. Պատմութիւն. Դ. տարի, Շարադրութիւն—Կէս օրէ յետոյ. Ե. տարի, Մատենագրական Պատմութիւն. Գ. տարի, Շարադրութիւն և Մերոպէ.

Դշ. 28 Յունիս.— Ե. տարի, Տարերք Երկրաչափութեան. Գ. և Դ. միացեալ Գրագիտութիւն. Բ. տարի հրահանգք փոխադարձ.—Կէս օրէ յետոյ. Ե. տարի Շարադրութիւն. Պատմութիւն Նոր դարու.

Ծան.— Յունիս 30 ուրբաթ, Նախակրթարանի քննութիւնք. կէս օրէ յետոյ Ձեւագիտութիւն տեսական և գործնական. Գծագրութիւնք, գեղագրութիւնք և ասեղնագործք հանդիսի օրն ի տես են. Նոյնպէս մարմնամարզք.

Դաշնակի օրերն են Գշ. և Ուր.։

Einen jüngliug trägt man hier heraus,
Einen Sohn, die Wonne seiner Mutter,
(O das lehrt ihr jammernd Ach!)
SCHILLER

Ա.

Խռովեալ է տունն երիտասարդ հիւանդին . . .
Հայրը և մայրն անուղողի մէջ կուլան . .
Զորդին իւրեանց մահուան տագնապըն յետին
Կը չարչարէ՝ աղէկ՛տոր տեսարան . .
Մենեկէն դուրս կը վազէ մայրն խելագար . . .
Դառնաչառաչ հեծէ զաւակն եղկելի ·
Ողորմ ողորմ կ'աղաղակէ հոգեվար . . .
Չը դիմանայ հայրն ալ ձայնին ահելի . . .
«Արգեօք տղուս բժշկուելուն չըկա՞յ ճար» ,
Կողկողագին դեռ գոչէ մայրն խանդակաթ . . .
Վերջին մէկ ա՛հ . . . անշունչ է տղայն անբարբառ . . .
Հայրը և մայրն համբուրեն զնա յուսահատ . . .

Բ.

Հընչէ զանգակն եկեղեցւոյ Թախծագին ·
Ցուղարկաւորք խուռն ընթանան յարտասուս ·
Մահուան երգեր տըխրահընչիւն կը լըսուին ·
Ողբք , ախուվախք կը խառնուին յաղէկուս . . .
Ծաղկեայ պըսակք ծածկեն զդագաղն բոլորտիք . . .
Կը ճանչնամ զայն՝ զոր սիրելի որդեկին
Մայրըն Թըշուառ ձօնեց, ողո՜րմ նըշանակ
Մընողագութ անյագ սիրոյ ցաւագին . . .

Գ.

Ողբամ վըրադ ես , ո՜վ աղնիւ պատանի ·
Հօրըդ և մօրդ երջանկութիւնն էիր դուն.
Պատիւ ազգիդ էիր և յոյս գեղանի ·
Ինչո՞ւ ասար գնացիր այսպէս շուտ մահուն . . .
Քըսաներեք լոկ տարիներդ ես սիրուն ,
Լաւութիւններդ ողբամ և բարքըդ հեզիկ ,
Լամ զիմաստիցդ ես ըղձերս ակաղձուն ,
Պատանութիւնդ ես ափսոսամ գեղեցիկ . . .
Ոչ դու զալուոր պիտի տեսնես ա՛լ զգարուն ,
Ոչ ըզվարդին փըթթել, զպայծառ առաւօտ ,
Ոչ զգեղգրաձայն պիտի լըսես ըզթըռչուն,
Ոչ ըզգիշեր պիտի տեսնես անաղօտ . . .
Ոչ ըզլիկնել պիտի տեսնես ա՛լ լուսին ·
Քեզ մայրդ ի մէջ հայ աղջըկանց հարսն աչեղ
Պիտի չըընտրէ · Նըշանածի մը սըրտին
Պիտի չըզգաս ըղբարախելըն անմեղ . . .

Դ.

Կամ մըտայոյզ , տըխուր ի տես դագաղին . . .
Գերեզմանաց Աստուածդ ահեղ ի՞նչ կ'ընես
Զայն ամենայն քաղցր արարածըս Քոյին
Զորս ամեն օր , աւա՜ղ, մեզմէ Դու կ'առնես . . .
Ի՞նչ կ'ընես , Տէր , զմեր սիրելիս ի՞նչ կ'ընես . . .
Լուսաւորեա՛ մեզ ըզգաղտնիսդ այս մըթին . . .
Արդեօք զնոսա ի սպառ յոչի՞նչ դարձընես . . .
Ո՞չ ես արդեօք պիտի տեսնեմք ըզնոսին . . .

Ե.

Դո՞ւ մօր սըրտին մէջ ա՛յնքան սէր ես գորով
Դըրեր , ո՛վ Տէր · ինչո՞ւ համար զայն կոտրես . . .
Թէ խեղճ մօրէն զաւակն այսպէս Դու շուտով
Պիտ՝ առնէիր , ինչո՞ւ համար զայն ըստեղծես . . .
Զարհուրելից կոտրած սըրտերն ի՞նչ կ'ընես
Դու մայրերուն . . . արդեօք զանոնք, ո՛վ Աստուած ,
Ցանքաւութի՞նս երկնից ի սփիւռ կը ցանես . . .
Ցասա՞նս արդեօք փոխես սըրտերն այն փըշրած . . .
Ցըսքանչելի տարածութի՞նս այն ահեղ
Արդեօք և զմեր Դու վերանես զսիրելիս . . .
Ինչո՞ւ համար , Աստուած, երկինքդ հրաշագեղ
Ինձ ոչ մեկնեն արդեօք ըղթօ մութ գաղտնիս . . .

Զ.

Ըզճըշմարիտ երկըրպագուդ՝ զիս, ո՛վ Տէր,
Ինչո՞ւ համար այսպէս անյոյս կը Թողուս . . .
Ինչո՞ւ Թողուս որ ես ի խոր յայս գիշեր,
Խարխափելով մընամ յարեան արտասուս . . .
Քու ձեռքդ է , Տէր , որ ես ըզլոյս Քո տեսնամ . . .
Ծառագայթե՛ա յիս Լուսոյ Այն անխաւար . . .
Քու ձեռքդ է , Տէր , որ վերըստին ես յուսամ . . .
Քեզ հնարաւոր է ամենայն անհընար . . .
Կենդանատու արարչութեան՝ որ զՈրդիդ
Ապրեցուցիր՝ յետ եռօրեայ մահուան , Տէր ,
Գերեզմանին դուռն է հըլու հրամանիդ . . .
Բա՛ց զայն Դու ինձ , պարզէ՛ զմահուան խորհուրդներ . . .
Գիտե՛ս որ ես մօրըս կաթին հետ մէկտեղ
Զհաւատն ի Քեզ ծըծեցի , Տէ՛ր իմ Աստուած . . .
Սակայն վըրաս ծանրացաւ շատ Աջդ ահեղ,
Շատ փորձեցիր զիս խորհըրդովք մըթագած . . .
Սո՛ւրբ , սո՛ւրբ , սո՛ւրբ ես , Տէ՛ր մեռելոցըն շիրմաց . . .
Սոսկմամբ զանոնք ես անուանեմ, տե՛ս , այժմիկ . . .
Ահաւոր են մահուան վըճիռքդ, ո՛վ Աստուած . . .
Ա՛խ , ի՞նչ կ'ըլլան հողին տակ մեր սիրելիք . . .

Բերա , 10/22 Յունիս 1889

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ

ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՑԱՐԿԻՆ ՆԵՐՔԵՒ

ԱՌ ՆՈՒՐԱՆԻԱ

Երբեք դու քեզ չես հարցներ «Մեր տղաք ի՞նչ կ'ընեն · մեր տղաք ի՞նչ պիտի ըլլան ·» Մեծագոյն հարցեր՝ լայնածաւալ գանկերդ շրջանը կ'ընեն և անպատասխանի կը վերադառնան իրե՛նց սկզբնակէտն · Որքա՞ն աւելի բարեբաստիկ էին, այնպէս չէ՞, որքա՞ն աւելի բարեբաստիկ են ուղեւորք, ո՛յք կ'ընեն աշխարհիս շրջանն · Հաճոյքն է՝ որ կը նորոգի ամեն նոր տեսարանի , հետաքրքրութիւնն է՝ որ կը յագենայ մինչեւ որ վերստին ծնանի · Սակայն իմաստասիրական խնդրոյ համար լուծին տարբեր է , այո՛ · լուծում մը , ելք մը գտնելու համար գանկին մէջ իր առխարխափ ուղեւորութեան ժամանակ՝ իմաստասիրական խնդիր մը ա՛յլ խնդիր մ'ակամայ իրեն կը կցէ , որ կը դանդաղեցնէ միւսոյն ընթացքն · Հարցք զհարցս ձգեն · և այն երկաթագիծ շղթայն շրջանակ մը կը կազմէ , որ՝ երբ մթապատ մը՝ մեր գլուխն ներքուստ կը բոլորէ , կատարեալ հակապատկեր որբոց ու սրբուհեաց զգըլխով բոլորուած լուսապսակին · Մտածմանց այդ շղթայն մթութի՛ւնն է՝ որ կը տարածուի մեր ճակատուն վրայ ու բովանդակ մեր էութեան ալ վրայ · «Մո՛ւթ է , մո՛ւթ» կը գոչէր Վարժապետեան աւագ ուրբաթ գիշեր մը Ս · Ստեփանոս եկեղեցւոյն մէջ, ուր քեզ հետ կը գտնուէինք , երբ դեռ մանուկ էինք · Այդ մթութիւնն որքա՞ն լուսապայծառ էր ա՛ն փայլուն պարահանդէսին լուսաւորութեան մօտ , ուր դուն ալ անմահ վարդապետին բացագանչութիւնն արձակեցիր · «Մո՛ւթ է , մո՛ւթ , Մելանիա՛ · Ջահերն ե՞րբ պիտի վառեն . . . .»

Մանկական աչաց ճառագայթ մը կրնայ խորտակել մեր գանկին ներքին այն մթին շղթայն ու պայծառութիւն սփռել մեր գլխոյն մէջ, մեր ճակատուն ու մեր էութեան վրայ · Մտիր վարժարան մը , մանաւանդ եկեղեցւոյն գաւիթն , որպէս ըրի ես այսօր · մանկանց մէջ մտիր ու մտիկ ըրէ իրենց պատասխաններն հարցաքննութեանց , իրենց երգերն , իրենց արտասանութիւններն , իրենց ճառագիծն և իրենց լռութիւնն · ակնարկէ իրենց ձեռաց գործերուն , գիր կամ գծագրութիւն կամ ասղնագործութիւն · տես սեւ լայն տախտակներն , որոց վրայ զուգահեռական ծիրք կաւիճն կը ձգին՝ փոքրիկ արարիչներու մատանց ներքեւ · մերթ երբ աստեղաց բոյլք են ո՛յք կը բոլորին ու կը փոզփոզին սեւ տախտակին վրայ , թուաբանական գործողութիւններ կամ հանրահաշուական նշաններ · Քանակագիտութեանց մէջ (+)ն անծանօթն է , ու կաւիճի քանի մը հարուածով կը տիրանաք անծանօթին , մինչ բարձրագոյն իմաստասիրութեան մէջ՝ յաւէտ Ք=Ք . . . .

Աշխարհագրութեան քննութիւն կը կատարուէր , երբ մտայ Հռիփսիմեանց վարժարանն · Ապաքէն քննութեան սկիզբէ՛ն իսկ կ'ուզէի ներկայ գտնուիլ · բայց մայրս հիւանդ է , և իր բնոյ ժամերէն կ'օգտուիմ մամանցելու համար ազգային վարժարանաց քննութեանց · Հռիփսիմեանց վարժարանին Աշխարհագրութեան ուսուցիչն է Պերպէրեան վարժարանի նախկին աշակերտ՝ Միհրան էֆէնտի Մօղեան · Ֆոնսէնին եղանակաւ կը դասախօսէ · Եթէ մանկանց կրթութեամբ զբաղէիր , եթէ նոր դասագրքերն աչքէ անցնէիր , ի՞նչ հաճոյք պիտի զգայիր, Նուրանիա՛ · պիտի տեսնէիր՝ զոր օրինակ՝ թէ Աշխարհագրութեան իմաստասիրութիւնն իսկ նոր եղանակաց շնորհիւ մատչելի կ'ըլլայ երկոտասանամեայ մանկանց · Հարցո՛ւ թէ գետերն ի՞նչպէս կը նպաստեն քաղաքակրթութեան , թէ այս ինչ երկիրն ի՞նչ պարտի այս ինչ նիւթական պարագային · ու փոքրիկ աղջիկներ համարձակ պիտ' ըսեն ինչ որ իրենց շրջանաւարտ մարք չը գիտէին · Իւրաքանչիւր երկրի վրայ պատմական ծանօթութիւններ ունին , զորս Ֆոնսէնէն առաջ և ո՛չ Աշխարհագրութեան դասագիրք մը կը պարունակէր · Ահա Հռիփսիմեան սանուհի մը , որ երկու բառով կը յայտնէ քեզ թէ Եգիպտոս ի՞նչ դեր կատարեց քաղաքակրթութեան գործոյն մէջ · Հերոդոտոսի խօսքն «Եգիպտոս Նեղոսի նուէրն է» այնպէ՛ս կ'արտասանէ , որպէս թէ ի՛ր իսկ մտաց ծնունդն ըլլար այն ·— Դասընդմէջ կ'երգէին աշակերտուհիք · կը ձայնակցէին դաշնակին կամ մանաւանդ դաշնակն իրենց կը ձայնակցէր , զի ներելի չէ մարդկային կենդանի գործարանն նախընտրել երաժշտական ո և է գործի · Սոյն ճշմարտութիւնն ըմբռնեցի մանաւանդ , երբ օր մ' Տիկին Ալյազեան երգե՛ց դաշնակին առջեւ · Դաշնամուրին տասնևութ զօն գործեքն գոգցես գիշատել աւելծատից ձայնն այն հրարձակ , որ յարաձեր երանգներով ու եւեւէջներով , տարածութեամբ ու խորութեամբ , արուեստիւ մարդկային ու ներշնչմամբ վերերկնային ·— Յաւարտ Աշխարհագրութեան քննութեան , արտասանութիւններ ըրին Հռիփսիմեան ու Նեկտարինեան սանուհիք , մերթ փոխասացաբար՝ որպէս սոխակք յանտառակին կամ որպէս հրեշտակք ի տաճարին · Որբ աղջիկ մը — որբ կոչուելու համար բաւական չէ՞ միթէ մա՛յր չունենալ — որբ մատաղ աղջիկ մը՝ Վեցերորդ կարգին ուսանողուհի՝ պատասխանեց և արտասանեց ամէնէն լաւ , պատասխանեց և արտասանեց սքանչելապէս · Ծանօթ անուն մը կրէ պատանուհին այն օժտեալ · Օրիորդ Մալէզեան ·

Ա՛յնքա՛ն յառաջադիմութեան առջեւ ըմբռնումս անբաւ եղաւ · այլ և յուզումս անհուն՝ այնքան ներդաշնակութեան ու բանաստեղծութեան մէջտեղ · Ու խօսեցայ հետագայն . . . լսելեայն ·

«Շաբաթ օր , Պէշիկթաշէրլի հովտին մէջ , դալարեաց ներքեւ Թաղեցինք զալարասեւ էակ մը , մեր բազմաճիւղ գերդաստանին կրտսերագոյն անդամն · Ուստի և կիրակի , հակառակ անձկագին փափագանացս , ներկայ չը գտնուեցայ ուսմանց գեղեցկագունին՝ Գրագիտութեան քննութեան , որ նոյն օր կատարուեցաւ վարժարանիս մէջ , քանզի չուզեցի բերել այս դրախտիս մէջ գերեզմանաց մահահոտ բուրումն · Այսօր իսկ վարանմամբ եկայ · Սակայն հնա՞ր էր միթէ բոլորովին անմասն մնալ քննութեանց վարժարանի՛ս մը , զոր կը վարէ խումբ մ'երիտասարդուհեաց , այնքա՛ն եռանդուն , այնքա՛ն հանճարեղ , այնքա՛ն անձնուէր · Վերջին քննութիւնն էր որ այսօր կատարուեցաւ · գեղեցիկ եղաւ , մանաւանդ թէ յուզիչ եղաւ այն՝ վերջարան մը կամ վերջնանուա՛գ երգի մը նման · Մինչդեռ արշալուսոյն նման վարդագոյն կուսանք՝ ի ծայր իւրեանց փափկիկ մատին՝ մեր աչքերն աշխարհացոյցին վրայ աշխարհէ յաշխարհ կ'առաջնորդէին , մեր հոգին՝ ի շնորհս արտասանութեանց և երգոց իւրեանց՝ բանաստեղծութեան թեւոց ու ներդաշնակութեան կոհակաց վրայ հեշտօրէն աշխարհէ յաշխարհ կ'առաջնորդուէր , մեր երկրագունտէն ու համայն երկնագունտերէն ալ վեր , բանաստեղծութեան ու ներդաշնակութեան բնագաւառն · հո՛ն , ուր մեր զգայարանք կ'անզօրին , այլ ուր զօրաւոր է մեր հոգին · հոն , ուր մեր երեւակայութիւնք յիրականութիւնս փոխարկին · հոն , ուր տեսնեմք մեր սրտին , ո՛յք Ալֆրէտ տը Միւսէի բացատրութեամբ՝ հոգին գամուած կը զգան ինքզինքնին , կը պարզեն իրենց ոսկի թեւերն , յորոց կաթկթած սիրակաթ վայելք անճառք զմեր հոգեակն արբուցանեն մտերան · Ո՛վ հրաշիցն բանաստեղծութեան · Եւ ինձ թուի, Տիկնա՛յք իմ, թէ բանաստեղծական ու երաժշտական գերազանց գործերն անո՛նք են , ո՛յք հեղինակք՝ արտադրութեան պահուն՝ ընդ միտ ածեն թէ կուսակա՛ն շրթանց վրայ պիտի թրթռան իւրեանց բանք և իւրեանց խաղերգանք ·

Ա՛հ , ձեր հոգին կոյս պահեցէք յաւիտեան , ո՛ շնորհագեղ կուսանք · Թողէ՛ք — քանզի ճակատագրին են օրէնք — Թողէ՛ք , երբ այս երազոց բոյնէն դուրս ելնէք և աշխարհ մըտնէք , թողէ՛ք ձեր մարմինն մաքառիլ ու ձեր միտք ոգորիլ կենաց իրականութիւններուն դէմ · այլ ստորերկնեայ հպմանէ յաւէտ կոյս պահեցէք ձեր հոգին , ինչ որ ի ձեզ ունիք իսկապէս աստուածայինն . . . .»

ՄԵԼԱՆԻԱ

ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Կարեւոր յուզում մը կը տիրէ այժմ Կովկասի մայրաքաղաքի հայ հասարակութեան գրագէտ դասի—ինտէլիգէնցիայ մէջ · Կովկասեան հայ մամուլն , նոյն իսկ ռուս լրագիրք , կարեւոր յօդուածներ կը նուիրեն այս խնդրոյն , ուստի աւելորդ չենք համարիր առանձին ուշադրութիւն դարձնել նորա վրայ ·

1880ին, այսինքն ճիշդ 9 տարի յառաջ , Տփղիսի մէջ հիմնուած է ընկերութիւն մ'որ «Նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ՛ ինքնուրոյն և թէ թարգմանուած գրքեր» ըստ իր կանոնագրութեան մէկ յօդուածին · Այս ընկերութիւնն իր առաջին տարին ունեցեր է 239 անդամ · բայց իր տեւողութեան այս 9 տարւոյ միջոցին մէջ , փոխանակ հաստատուն հիմ դնելու հրապարակի վրայ և մեծ քայլերով յառաջ դիմելու, մեծագոյն կերպով և աստիճանաբար ընկեր , քայքայեր և օրհասական վիճակին է հասեր · 239 անդամներէն այժմ մնացեր են միայն 13, այսինքն մինչեւ այն աստիճան քիչ , որ ընկերութեան ընդհանուր անդամներու թիւն աւելի պակա՛ս է եղեր քան որքան կը պահանջուի ըստ կանոնագրութեան՝ վարչութիւն կամ վարչական մարմին կազմելու համար · Այս իրողութիւնը թէ՛ ճիշդ և թէ տխուր է , և որքան ծիծաղելի , այնքան ցաւալի է · Ռուսահայոց մէջ ընթերցանութեան սէր մը թէպէտ ուշ սկսած , բայց համեմատաբար աւելի է տարածուած քան թէ Տաճկաստանի Հայոց մէջ · Նոյնպէս գրական աշխատութիւններ ունենալու և ազգային մատենագրութիւնը թարգմանական կամ ինքնուրոյն գրուածներով ճոխացնել չասենք , այլ նորա բազմատեսակ պակասը լեցնելու ջանքն ու պահանջքը այս վերջին տարիներս համեմատաբար աւելի կը զգացուի Ռուսահայոց կամ Տաճկահայոց մէջ · (Հանդէս Ամսօրեայ 1887 ամի Ազգային հրատարակութեանց մասին յառաջ բերած վիճակագրական ցանկը մեր ասածը կատարելապէս կ'ապացուցանէ ·) Ռուսահայոց կեդրոնի մէջ կազմուած կարեւոր հրատարակչական ընկերութիւնն ուղղակի պարտական էր մի կողմէն նպաստել գրական աշխատաւորներուն և միւս կողմէն հասարակութեան պահանջմանց ընթերցանութեան նիւթ տալ · Իսկ ընկերութեան ցայժմ գոյութիւն ունեցած վարչութիւնը տարբեր կերպով է ըմբռներ իր դերն ու պարտաւորութիւնն · Նա անուշադիր է եղեր թէ՛ թէ մէկուն և թէ միւսին · այս ընթացքի արդիւնքն է այն անկեալ վիճակն , որուն ենթարկուած էր նա մինչեւ անցեալ ամիս , այսինքն մինչ'ւ նոր վարչութիւնը · Նախկին վարչութիւնը կը ջանայ ինքզինք արդարացնել՝ բոլոր մեղքը ընկերութեան անդամներուն մի առ մի հեռանալուն վրայ դնելով չյիշելով պատճառներն թէ ինչո՞ւ համար է պատահել այդ անկումը · Նա միանգամայն պարծիլ կ'ուզէ իր հրատարակութիւններով · Բայց ի՞նչպիսի գրքեր են սոքա · Մեծաւ մասամբ այնպիսիք , որոցմէ աչագին դէզ մի ընկերութեան գրապահին և մեծ քանակութիւն մ'ալ գրավաճառներու քով կը մնայ · Ուրեմն այդ գրքերը հասարակութեան մտաւոր պահանջքին համապատասխան չեն եղեր , եթէ ոչ գէթ կէսը պիտի ծախուէր · Շատ դիւրին գործ է հասարակութիւնը մեղադրելն ամէն առթիւ , մանաւանդ երբ հարկաւոր է հասարակաց դատաստանի առջեւ արդարանալ , աննպատակ գործունէութիւն մը կամ ճշդագոյնը անգործունէութիւն մը պարտկելու համար ·

Հասկնալու համար թէ նախկին վարչութիւնն ինչպէս է ըմբռնած եղեր իր առանձնած գործի կառավարութիւնն ու նպատակը , բաւական է յիշել միայն այն վարմունքն , որ նա ունէր կամ ունեցած է գրական աշխատաւորներու հետ · ինչպէս որ ապրիլ 2ին կայացած ընդհանուր ժողովի քննութիւններէն երեւաց , այդ վարչութիւն կոչուած մարմինը չի բարեհաճեր եղեր մինչեւ անգամ պատասխանել իրեն դիմող հեղինակներուն · Իսկ մենք գիտենք այնպիսիներն այս վերջիններէն , որ կրկին և կրկին անգամ նամակներ գրելէն զատ , նամակագրոցմ ալ կ'ուղարկէին մի որ ու է պատասխանի արժանանալու համար , բայց ի զուր · Վարչութիւնն այնքան չէր բարեհաճեր իրեն դիմող գրագէտներուն երկու տող պատասխան ուղղել ·

«Հայերէն գրքերի հրատարակութեան» ընկերութիւնն իր ուշադրութիւնը դարձուցած էր վերջին տարիներս մեր դասական մատենագրութեան վրայ և կը տպէր Ագաթանգեղոս , Ասողիկ , Խորենացի և այլն , թէեւ այն ալ գլխաւորապէս բարերարաց ծախքով · Երեւի նա մրցիլ կ'ուզէր Մխիթարեաններու հետ · Բայց չէ՛ , նա կ'աշխատի եղեր պատմագիրներու գործոց գինն աժանցնելով տարածել նոյները հասարակութեան մէջ , որպէս զի սա իր մտաւոր կրթութիւնը հիմնաւորէ լուրջ դասական հեղինակներ կարդալով , ճաշակը զարգացնէ և հմտանայ · Սակայն ո՛րքան պատրաստ է ժողովուրդն այդ ինքն ըստ ինքեան ա՛յլ-պարսաւելի նպատակին համար , այդ արդէն կ'ապացուցանէ անով, որ մեր դասականներն ընդունակ չեղան գէթ տասներորդ մասամբ մ'իսկ մտնել ժողովրդեան գրադարաններն · Եթէ այդ գրքերն աշխարհիկ հայերէնի վերածուած լինէին , թերեւս , մանաւանդ թէ հաւանական էր , որ շատ աւելի ընդունելութիւն գտնէին և հրատարակիչներու նպատակին (եթէ իրօք այն էր) կիսով չափ ծառայէին · Այլապէս՝ բնականաբար պիտի ունենար այն հետեւանքն որ այժմ կ'երեւայ · Թէ ո՛րքան յարմար դատողութիւն է Գլադստոնը կամ նմանները՝ իբրեւ դասական մատենագրութեան համակիր՝ օրինակ ընծայել մեր դեռ ևս մտաւորապէս տղայ հասարակութեան՝ այն կը թողունք ընթերցողի նկատմանը · Միեւ նոյն ժամանակ այս ալ պէտք էր և է ի նկատ ունենալ , որ այժմ ընդհանրապէս , մանաւանդ ի Գաղղիա եւ Գերմանիա դասական գրականութեան իշխանութեան նոր սահմանափակում մ'ալ կ'ուզեն տալ հին մեռեալ լեզուներու ուսման աստիճանաբար պակսեցնելով վարժարաններէն · Հոս տեղը չէ պարզել թէ դասականի ուսման սահմանափակումն որքան նպատակայարմար է ժամանակակից կրթութեան համար , բայց կ'արժէ , որ մեր գրական ընկերութիւններն ու շրջանները լուրջ ուշադրութեան առնէին զայն ·

Տփղիսի հրատարակչական ընկերութիւնն այժմ նոր վարչութիւն է կազմած , նոր խմբագրական մասնաժողով , որոնք անշուշտ առանձին եռանդով պիտի գործեն [illegible] , թէեւ մեծապէս բաղձալի էր որ ընկերութիւնը չհասնէր այլ եւս այն անկեալ վիճակին , որ երեւցաւ վերջին ժողովներու մէջ , այլ հաստատուն քայլերով կարողանար իւր գործն յառաջ տանիլ նաեւ երկրորդ և հետեւորդ տարիները · Չգիտենք ինչ ծրագիր են կազմած իրենց համար նոր վարիչները , բայց յամենայն դէպս աւելորդ չէր լինէր նոցա ուշադրութիւնն հրաւիրել մանաւանդ հետեւեալ կէտին վրայ ·

Մենք նոր , գրական դասակարգ մը ունինք, որ եռանդ ունի, կ'ուզէ ինքզինք նուիրել մեր նոր ժամանակակից գրականութեան աղքատիկ տաճարին , բայց նիւթական կարօտութեան պակասութեան պատճառաւ, կա՛մ ջախջախեալ յոյսերու և անյատակ վհատութեան վհին մէջ կը թաղէ իւր բովանդակ եռանդն ու իղձն և կա՛մ, եթէ հաստատամտութեամբ օժտեալ է , նա շատ անկատար կերպով կ'իրագործէ արդիւնքն ու յոյզերն իւր ներքին բերման , որ գուցէ տաղանդ մը լինելու պիտի առաջնորդէր զինքն աւելի նըպաստաւոր հանգամանաց մէջ · Մենք չունինք , մանաւանդ Կովկասի մէջ , մասնաւոր հրատարակիչներ , որոնք յանձն առնէին այսպիսիներուն օգնութեան ձեռք կարկառել, իսկ անհատական բարերարներու կամ կանխօրէն բաժանորդագրութեանց վրայ շատ քիչ յոյս կարելի է դնել · Ո՛վ պիտի գրաւէ այս պակաս տեղը , ո՞վ պիտի խրախուսէ մեր գրական մշակները եթէ ոչ հրատարակչական ընկերութիւնն · Այս պիտի լինի մեր կարծեօք ընկերութեան , գործունէութեան իսկական ասպարէզը · Թող ընկերութիւնը յանձն առնու հրատարակել մեր նոր , ժամանակակից գրագէտներու երկերը , բնականաբար ընտրելով արժանաւորագոյններն ու յարմարագոյններն · Այս երկերը միայն ինքնուրոյն պէտք է չլինին , այլ և թարգմանութիւններ , օտար հեղինակներէն · վասն զի ազգային ներկայ գրականութիւնը մեր մէջ դեռ զգալի կերպով միակողմանի է և ժողովրդի մտաւոր սնունդը , նորա կրթական պիտոյքը հոգալու , լրացնելու կարող չէ դեռ · Եւրոպական , մասամբ եւ ռուսական ընտիր մատենագիրներու թեթեւ եւ մատչելի գրուածները մատչելի գներով կարելի կը լինի հայ ընթերցողներու մեծ մասին մէջ տարածել · Եւ եթէ երբեմն ընկերութիւնը մրցում նշանակէ իր ընտրած նիւթի վրայ , գրագէտներու մէջ , գրական շարժումը բնականաբար աւելի մեծ զարկ կ'առնու ·

Ընկերութիւնը՝ վերոյիշեալ ընթացքով վարած ատեն , երկու նպատակի միանգամայն գոհացում տուած կը լինի , նախ՝ մեր չքաւոր գրագէտները փոքր ի շատէ վարձատրութիւն կը ստանան իրենց աշխատութեանց համար , որ կը խրախուսէ զիրենք եւ դէպի զարգացում կը մղէ , երկրորդ՝ հասարակութիւնն ալ աւելի կը գըրաւուի այդ գրուածներով , աւելի կ'ընդհանրանայ ընթերցանութեան սէրը նորա մէջ եւ միանգամայն ընկերութիւնն ալ թէ՛ բարոյապէս մեծ օգուտ կը քաղէ ժողովրդականութիւն եւ համակրութիւն գտնելով հասարակութեան կողմէն եւ թէ նիւթական շահ ալ կ'ունենայ իր հրատարակութիւններն աւելի դիւրաւ տարածելով ·

Այժմ կը մնայ գլխաւոր խնդիրն թէ ի՛նչմեղէն պիտի հոգայ ընկերութիւնն իւր ծախքը · Թէեւ ցաւալի է ասել և մինչեւ անգամ ամօթալի Տփղիսի հասարակութեան համար , բայց դժբախտաբար ապացուցուած է որ ոչ մի ընկերութիւն հաստատ հիմ չի կարողանար դնել այնտեղ և Հայի ընդհանուր սովորութեան համեմատ գործին սկսուած ժամանակ եռանդ և ապա անհոգութիւն ու պաղութիւն կը տիրէ · Եթէ Մշ-կէ անընդհատ և խիստ մորակումները չլինէին , հաւանականաբար այս 9 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող հրատարակչական ընկերութիւնը դեռ ևս շարունակէր գուցէ քնել իր 13 անդամներով , կամ գէթ այսպէս է մեր լսած կարծիքը շատերէ · Եւ թէպէտ մեր վերեւ նկարագրած յուզման շնորհիւ նոցա թիւը բարձրացած է արդէն 150ի , բայց միայն անդամավճարի յոյսով գործ կատարելու ջանալն անշուշտ երեխայութիւն է · Ուստի ուրիշ աղբիւրներ հարկաւոր է փնտրել · Այս աղբիւրներէն գլխաւորը պէտք է որ լինի բնականաբար՝ գրքերու վաճառումէն գոյացած արդիւնքը · սակայն այդ ևս բաւական չէ անշուշտ ըստ կարի ընդարձակ ծրագիր մը իրագործելու , ուստի ընկերութիւնը կ'աշխատի կողմնակի օգուտներով իր հասոյթներու վրայ յաւելում ունենալ · Այս վերջին միջոցներէն յատկապէս մէկի վրայ մենք կ'ուզէինք շեշտել այս անգամ · Հայերէն գրքեր տըպելու և տարածելու և հայ գրականութիւնը մեր հասարակութեան մէջ ընդհանրացնելու համար կազմուած ընկերութեանը անշուշտ ճշդագոյն նպատակն է հայ հասարակութեան մէջ տարածել ազգային և օտար ուսմանց արդիւնքը , նորա միտքը զարգացնել և նորա սէրն ու հակումն դէպ ի ինքնակրթութիւնն և ինքնաճանաչութիւնը գրաւել · Արդ՝ մեր կարծեօք , նա պէտք է նաև կենդանի խօսքով դէպ ինքը ձգել հասարակութեան ուշն և ձգտել իր նպատակի յաջողացմանը · Նա պարտաւոր է որքան կարելի է շուտ շուտ դասախօսութիւններ և գրական երեկոյթներ կազմէ , որոնք գրական ընկերութեան մը համար ամենապատշաճաւոր գործեր են · Միւս կողմէն ամէն ոք կը խոստովանի , որ հրապարակական ուսումը , կենդանի խօսքը միշտ առանձին , երկարատեւ տպաւորութիւն մը կը թողու ունկնդիրներու վրայ · Պէտք է հարկաւ աշխատիլ , որ դասախօսութիւնը որքան կարելի է հետաքրքրական լինի · Ընկերութեան անդամներու մէջ պակաս չեն այնպիսի հմուտ անձինք , որոնք յօժարութեամբ կարող կը լինէին կատարել այս գործն եթէ փոքր ինչ զոհողութիւն կամենային անել իրենց ժամանակի յօգուտ ընդհանրութեան · Եւ այս միջոց ամենեւին հակառակ չէ ընկերութեան դիտման , քանի որ այդ դասախօսութիւններէն և երեկոյթներէն ստացած արդիւնքը պիտի գործածուի միևնոյն նպատակին և մանաւանդ որ այն դասախօսութիւնները պէտք է նաեւ առանձին գրքոյկներով տպուին · Այս առաջարկութիւնը կը յանձնենք ընկերութեան վարչութեան նորընտիր ատենապետ Պ · Փիլիպպոս Վարդանեանի ուշադրութեանը ·

Կը վերջացնենք մեր յօդուածը բաղձալով , որ ընկերութիւնը միանգամ ընդ միշտ թօթափէ իր վրայէն անհոգութեան և անտարբերութեան ծանր լուծը , և օգուտ քաղելով նախորդ վարչութեան սըխալներէն գիտնայ թէ՛ գրաւել և հաստատ պահել , հասարակութեան մտադրութիւնն և թէ իր վրայ դրուած վստահութիւնն արդարացնել ·

Կ · ՏԻՐԵԱՆ

Բաթում , 22 մայիս 1889

ՊԱՂՏԱՏԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՄԻՖԹԱՀ ԻՒԼ ԼՈՒՂԱԹ
ԻԼՄԸ ՆԱՀՖ (ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ)
Յ · ՓԱՇԱՅԵԱՆԻ
Գին 2 ղրուշ 142

Ազգային բարերար մը մասամբ հոգացած լինելով տպագրութեան ծախքըն և փափագ յայտնած որ աժան գնով վաճառի սոյն դասագիրքըն որպէսզի հայ մանկտին դիւրագնի կարենայ ստանալ զայն , ըստ այսմ գործոյս հրատարակիչն 6 ղրշի գինն զեղչած է 2 ղրշի · 127 երես կիսակազմ 30 տարիներէ ի վեր ազգային վարժարանաց մէջ իւր դասախօսութեամբ և Թուրքերէն լեզուի մէջ իւր հեղինակութեամբ քաջածանօթ հեղինակին սոյն գործն այնքան դիւրագնի կը յուսանք որ մուտ պիտի գտնէ ամեն հայ վարժարանաց մէջ և լրացնէ շարքն դասագրոց Թուրքերէն լեզուի ամենակարեւոր ուսման ·

ՏՐ · ՔՆՈՐՍԻ

Հակատենդային դեղ , շինուած ի ձեռն

Մայսթըր Լուսիուս Պրուննինկի , ի Հէօխըստ , Գերմանիա , որ միակ իրաւունք ունի սոյն դեղին պատրաստութեան , պաշտպանեալ արքայական արտօնագրով ·

Տր · Քնորսի Անթիբէռինն , երիտասարդաց համար 1 էն 2 կրամ կ'առնուի՝ ջրի կամ ուրիշ ո և է ըմպելիքի մէջ լուծուելով , և ամենէն ազդեցիկ ու ամենէն ծանօթ դեղն է գլխու ցաւի , անգարի , ջղային ցաւի , յօդացաւի , ժանտատենդի , և ուրիշ շատ հիւանդութեանց մէջ լաւագոյն հականեխիչ դեղն է · Ջերմապէս կը յանձնարարուի Բժշկական համալսարանէն ·

Կը գտնուի ամէն ծանօթ դեղագործի և դեղավաճառի քով ·

Տր · Քնորսի Անթիբէրինին վրայ փընտռել Առիւծի պատկերը · Իւրաքանչիւր տուփ անպատճառ կը կրէ Տր · Քնորսի ստորագրութիւնը կարմիր տառերով ·

Զգուշանալ կեղծերէն · 515

Յ · Վ · ԱՃԷՄԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքերէն , հայերէն , յունարէն , Փրանսերէն , անգլիերէն , ռուսերէն , գերմաներէն , իտալերէն , պուլկարերէն , եբրայեցերէն եւ հրէագիր սպաներէն լեզուներով

Լեզուաց Դասատուութիւն
Դատական Գործեր , Ծանուցմունք
Թիւ 4, Ջիվէր Պէյ Խան, Գալաթիա, Թիւ 4
502 7—46

ՍԳՈԴԻ ՄՕՌՈՒ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Եըլտըզ, Կ · Պոլիս , 13 դեկտ · 1888

Պարոնայք Սգոդ և Պօուն ,

Կը ցաւիմ որ պաշտօնական դիրքովս կարող չեմ փորձել ընել , այլ համաձայն ուրիշներու փորձերուն և այն բժշկաց որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ , կը յայտարարեմ որ ձեր Մօրուաձկան իւղն , իր այդ վիճակին մէջ դիւրաւ խմուելով և մարսուելով , կը համապատասխանէ այն յատկութեանց զորս ախտաբուժական գիտութիւնն ի վաղուց անտի հաշուած է , մանաւանդ պէս յաջող պատրաստութեան մէջ ·

ՏՐ · Ս · Ս · ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վեհ · Սուլթանին

ԻԼԱՆ

Ծումա վէ բազարտան մատա կիւնլէրտէ սապահլարը Ենիմահալլէտէն սահաթ պիրտէ հարէքէթ իտէն վափոր իշպու Հազիրանըն օն իքինճի բազար իրթէսի կիւնինտէն իթիպարէն սաաթ պիր պուչուքտան հարաքէթ իտէճէկտիր ·

Վէ Ենիքէօյտէն սաաթ իքի պուչուքտա պիր վափոր տահի հարաքէթլէ Միրկիւն Պոյաճի քէօյ Ռումէլի Հիսար Արնաւուտ քէօյ Գուրուչէշմէ Օրթաքէօյ Պէշիկթաշ իսքէլէլէրինէ ուղրաեարաք քէօփրիւյէ կէլէճէկի Շիրքէթի Խայրիէ Թարաֆընտան իլան օլունուր · 453

Հազիրան 8 , 1889 4—4

ԻԼԱՆ

ՓԱԳԸ ՍԻՐԱՍՔԷՐԻ

Միւպայեա օլունաճագ մալըմ էլ մըգտար պուղտայ վէ արփանըն իշպու հազիրանըն օն եէտինճի ճումա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն իթասըլնա թալիպ օլանլարըն մագամը Սերասքերի լէվազըմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր ·

15 Հազիրան , 1889 541
Նօ · 32 2—2

Արտօնատէր Ս · ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

AU PANTEON

ԳԱԼՖՈՊՈՒԼՈ ԵՂԲԱՐՔ

Բերա Մեծ Փողոց Կալաթա Սերայի մեծ դրան դէմ Թիւ 206

Գալֆօբուլօ եղբարք պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ , ամառն եղանակին համար , Բարիզէ բերել տուած են չըջազգեստի համար մետաքսէ և բրդէ գեղեցիկ կերպասներ , ամեն տեսակ [illegible] , [illegible] , [illegible] , նորաձեւ [illegible] և այլն ·

Բոլոր այս ապրանքներն , որք վերջին նորաձեւութեանց կը համապատասխանեն և ընտիր տեսակէ են , խիստ աժան գներով կը վաճառուին ·

Հարսանեաց օժիտ պատրաստող ընտանիքներ մեծապէս պիտի օգտուին եթէ ուղղակի Գալֆօբուլօ եղբարց վաճառատունը դիմեն · 492 16—20

ՀՐԴԵՀԻ ու ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

69

ՆՕՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 1,932,350

ՆՕՐԹՀԸՐՆ ԼԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած [illegible] մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուած վնասնին 15,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոյ և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիօն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

ՖԷՐՆԷԴ–ԲՐԱՆԳԱ.

Մասնագիտութիւն Միլանի Բրանգա եղբարց
Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Փառաւոր յաջողութիւն յԻտալիա, յԱմերիկա, ի Հնդկաստան, յԱրեւելս և յԵգիպտոս.— Շքադրամ 1885ի Ան վէրսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլպուրնի և Պրուսէլի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 1873ի Վիէննայի միջազգային ցուցահանդէսներուն մէջ։

ՖԷՐՆԷԴ-ԲՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ ըմպելին է.— Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իբր զգուշական դարման ճահճային երկիրներու տենդերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԴ-ԲՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը գլխու պտոյտը, ջղային ցաւն, և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ ըմպելիներէն և ամենալաւէն գերազանց, կ'առնուի ամէն օր հացէն առաջ իբր ախորժաբեր։ Ճաշէն յետոյ, ազդու մարսողական է։ Կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, Սելծի ջրոյ և խահուէի հետ։

ՖԷՐՆԷԴ-ԲՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր սուրճարանաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։ 381 16—17

THE CROWN PERFUMERY COMPANY

ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹՈՑ ԳՈՐԾԱՐԱՆՔ ԼՈՆՏՈՆԻ «ԹԱԳ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

TRADE MARK
E. COLLINS

Այս գոյացութիւնները շատ խիտ են, և անբաղդատելի են իբր բուրման տևողութիւն և տեսակաւորութիւն։ Աւասիկ անոնցմէ մէկ քանիին անունները.

ԹԷՆՆԻՍ ՓՈՒՏ (Թէնիսի փունջ)
ՓՕՏ Վ·ԻՕԼԷԹ (Մանիշակի անուշահոտ)
ԼԻԼԻ ՕՎ ԹՀԸ ՎԱԼԷՅ (Հովտի շուշան)
ՈՒԱՅԹ ՌՕԶ (Ճերմակ վարդ)
ԳՐԷՊ ԷՅՊԸԼ ՊԼՈՍՍԸՄ
[illegible]
[illegible]

ՄԱԹԻՈԼԻԱ
ՃՕՔԻ ՔԼԸՊ
ԻՍ-ԲՈՒՔԷ
ՄԱՐԳԱՐԻՏԱ
ԻԼԱՆ-ԻԼԱՆ
ՕՐՕՐՕՆԹԱ

Այս և այսպէս ուրիշ հոտաւէտ նիւթեր մեծ հռչակ հանած են Եւրոպայի արքունեաց, ազնուականութեան և բարձր դասուն մէջ, իրենց հոտին փափկութեան և տեւականութեան համար։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԱՒԱՆԴԱՅԻ ԳՈԼՕՆԻԱՅԻ ՋՈՒՐ։ Ուրիշ [illegible] գործարաններէ եկածէն գերազանց։ Մէկ փորձ միայն կը բաւէ։

ՕՐԻԱԼԻՆ ՓՈՇԻ ԳԼԽՈՒ ՀԱՄԱՐ։ Այս փոշին յաջողած է մինչև հիմա բոլոր գործածուածներուն տեղ և ընդունուած է ազնուականութեան և բարձր դասուն։ Գլխոյ գոյնին փափկութիւն կուտայ, առանց հետք թողլու, մորթը կը պահպանէ արեւէն, հովէն, և պզտիկներէ կ'արգիլէ։

Ներածողներէն պզուշանալու համար, պէտք է դիմել միայն Կ. Պոլսոյ միակ գործակալին ԼԷՕՆ ՏԸ ԲԱՐՈՒԵԱՆ

2[illegible]4 Անգլիական ընդհանուր մթերանոց

Թիւ 95 և 97, Նոր քուչէ Գալաթա, Թիւնէլի կայարանին մօտ, Վոյվոտայի պահականոցին կից։

Coleman's Liebig's Extract of MEAT & MALT WINE

HUNDREDS OF TESTIMONIALS HAVE BEEN RECEIVED FROM MEDICAL MEN.

ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մ'է, բաղկացեալ Բորդոյի գինիէ, Լիէպիկի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով այսպէս սնուցանող, զօրաւոր և գրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ տկար մարդոց համար լաւ է հաւասարապէս։

Բժշկական համալսարանն հաւանած է զայն և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է։ ՀԱԶԱՐԷ ԱՒԵԼԻ ԲԺԻՇԿ գրած են իրենց վկայութիւնները։ Ահա կը թարգմանենք վկայութիւններէն մէկը

Թ. ԲԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍԻ, Մ. Ր. Ս. Ը. Լ. Լ. Մ. Ք. Ս. Բ. Ճ. ԷՍ ԸՆԿ.

26, Լորն Րոտ և 24 Համիլթըն Սդրիթ

Պրընհիտ, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ինչպէս առնելով խորհուրդ մրցման մը հանած գ-նուլուն [illegible], կը փափաքիմ յայտնապէս գրուցել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մսի և Մալթի պատրաստութենէն. քանի քանի անգամներ տեսած եմ անոր առողջարար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ, որոց համար պատուիրած եմ զայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ գինին (առանց մսոյ) չպիտի կրնար տալ։

Ընդունեցէք, և այլն և այլն Թ. ԲԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍ

Ի վերջոյ, մսի աղուրիս? գլխաւոր բժիշկ ջերմագինս յանձնարարած են զայն։

Հարցնել ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիկի մսի և Մալթի խառնուրդով, զգուշանալ կեղծերէն։

Գինեվաճառ ստորագրեալն, միակ գործակալ ի Թուրքիա Գոլիմանի և ընկերութեան գործարանին Ս. Ճօ-ճս Նորուիչ և Լոնտոն։ ԼԷՕՆ ՏԸ ԲԱՐՈՒԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահեստանոցին քով, կամուրջին Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյին- Թիւ 95 և 97, Ղալաթիա 80



ՇՔԱԴՐԱՄ

ԱՄԷՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒ ՄԷՋ

ՌԻՇԼԻԷՕԻ ԿԱՅԼԱԿՆԵՐ

Աֆրոդիտեան գրգռիչ դեղ (մարգարտաձեւ լուծելի քաբսիւլներով)

ՊՈՒՐԺՈՊԻ

Առաջնակարգ դեղագործ, մատակարար հիւանդանոցաց, Ռամպիւդօ փողոց, Բարիզ

Կատարելագործեալ ՌԻՇԼԻԷՕԻ ԿԱՅԼԱԿՆԵՐԸ գերազանց դարման են ամէն վաղահաս սպառման պարագայի մէջ. ծանօթ ցուած են իբր ծննդական գործարանաց ամենէն հզօր գրգռիչները. բաց աստի իբր փրկարար ազդեցութիւնը ստամոքսին վրայ՝ կազդուրիչ շարքին մէջ կը դնէ զինքը։

ՌԻՇԼԻԷՕԻ ԿԱՅԼԱԿՆԵՐԸ բնաւ վերաբերութիւն չունին մինչև հիմա գովաբանուած ամէն դեղերուն հետ որք վնասակար են։

Աֆրոդիտեան այս նոր դեղը կը ներկայացնենք ընդհանուրին ուշադրութեան իբր դեղ մը որուն ազդուութիւնն ապահով է և անվտանգութիւնը բացարձակ։ [կարդալ յայտարարութիւնը։]

Ի Թուրքիա ներկայացուցիչն է Ֆ. Պէլլիս, Ֆրնթըքլեան խան, Պոլիս. Ի Կ. Պոլիս կը գտնուին դեղարանն Պէյօղլուի Տէլլա Սուտա, Յ. Աբլամօ, Բրիտանական, Քիւչիւքեան եղբարց և Անաստասիատէս ի Բերա. Թիֆթօա, Տ. Աբէսթորիատէս և Ա. Դաազորիատէս ի Ղալաթիա. Տ. և Մ. Մէգիքի ի Պոլիս. Եգար եղբարք Յամիր. Հ. Խիւ, ի Սելանիկ։ 337

MYRTOL du Dr LINARIX

1244 *Lauréat de la Faculté de Médecine de Paris*

Le **MYRTOL LINARIX** est présenté sous forme de **Globules** employés avec le plus grand succès contre les

AFFECTIONS CHRONIQUES DE LA POITRINE:
Rhumes, Bronchites, Catarrhe, Asthme avec **Oppression** et **Palpitations.**

Les **GLOBULES DE MYRTOL LINARIX** doivent être pris à la dose de 6 par jour : 2 le matin, 2 vers midi et 2 le soir.

Toutes les personnes qui prennent les **VÉRITABLES GLOBULES DU Dr LINARIX** *s'accordent à reconnaître qu'elles respirent plus facilement.*

Exiger les **Véritables Globules Linarix** *de* **CLIN & Cie**, *de* **PARIS**, *que l'on peut se procurer chez les Droguistes et Pharmaciens.*

EMULSION SCOTT

(ՍԳՈԹԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԶՈՒՏ ԻՒՂ

Հիփոֆոսֆիտ կրի և սոտայի

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԹԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք։

Կաթէն չափ ախորժահամ է

Մորուի ձկան հոտ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիբոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճոզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս. ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԻՐՇԻ. 443

ՎԻԱԼԻ ԳԻՆԻ

ԿԱԶԴՈՒՐԻՉ
ԶՕՐԱՑՈՒՑԻՉ
ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Ամենազօրաւոր կազդուրիչն զոր պարտին գործածել [illegible] ծերերը, կանայք, տկարակազմ տղայք, և ամէն փափուկ անձինք։

Բաղկացեալ Քինայէն և Ջղային ու Ոսկրային դրութեանց կազմութեան և զարգացման յոյժ անհրաժեշտ նիւթերով։

TRIPLEX IN UNUM: SANITAS
VIANDE
QUINA
PHOSPHATES

ՔԻՆԱՅՈՎ
ՄՍԻ ՀԻՒԹ
ՖՕՍՖԱԹ ՏԸ ՇՕ

ՎԻԱԼԻ ԳԻՆԻՆ ամենէն ազդու դեղերու միաւորութիւնն է, ընդդէմ Արեան տկարութեան, Դեղնութեան, Թոքախտի, Ստամոքսի ամէն ցաւերու, փորհարութեան, Հիւծման, երկար ապաքինման, Եւն. ի մի բան, Թուլութեան, Վատութեան, Ջղային ուժհատութեան ամէն վիճակներուն որոց շատեր չարաչար կերպիւ ենթակայ են մեր օրերս։

ԼԻՈՆ—Դեղարան Ժ. ՎԻԱԼ, Պուրպոն փողոց, 14—ԼԻՈՆ 262

Միակ գործակալք և ներկայացուցիչք ի Կ. Պոլիս ԷՏՈՒԱՐՏՍ և ԱԼՊԷՐԹԻ Պէրքէթ խան, Ղալաթիա

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ
THE MUTUAL ACCIDENT ASSOCIATION LIMITED
ԱՐԿԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

[illegible] 100000 անգլ. ոսկի ամբողջ. [illegible]

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՒՐՀԱԿՔ

Տարեկան 1 ոսկւոյ վճարումով մը կ'ապահովէ 1000 ոսկի, Մահուան կամ [illegible] և բացարձակ անկարողութեան պարագայի մէջ։

333 ոսկի, Մշտատեւ և մասնական անկարողութեան պարագայի մէջ։

Շաբաթական 6 ոսկի, առժամեայ անկարողութեան պարագայի մէջ, թէ' ամբողջական և թէ' մասնական։

GLASGOW & LONDON ԿԼԱՍԿՕՎ ԷՆՏ ԼԸՆՏԸՆ

Դրամագլուխ 300,000 Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալք ՀՕՊԳԻՆ ՆԻՊԱՐՔ եւ ԸՆԿ.

(171) Պոլիս, Սուլթան Համամ, Ասլան խան թիւ 13, 14, 15

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ 1878Ի
ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ
Որ միմիայն տրուած է
Արծաթազօծ ոսկերչական գործոց

և ՔՐԻՍԹՈՖԼԻ անունն ամբողջ
Միակ երաշխաւորութիւն գնորդին համար

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՍՊԱՍՔ
ՍՊԻՏԱԿ ՄԵՏԱՂԻ ՎՐԱՅ ԱՐԾԱԹԱԶՕԾԵԱԼ

Առանց հոգ ընելու մեզ դէմ մղուած գնոց մրցման, որ անշուշտ տեսակին յոռութեան շնորհիւ կրնայ լինիլ, միշտ պահած ենք մեր արտադրութեանց կատարելութիւնն և հաւատարիմ մնացած ենք մեր սկզբան՝

ԼԱՒԱԳՈՅՆ ԳՈՐԾ ՏԱԼ ԿԱՐԵԼԻ ԵՂԱԾԻՆ ՉԱՓ ԱԺԱՆ

Գնողին միտքն հանդարտ պահելու համար, նմանապէս պահած ենք

ՄԵՐ ԱՊՐԱՆԱՑ ԼԱՒՈՒԹԻՒՆՆ

ինչպէս որ մեր քառասնամեայ փորձառութիւնն անհրաժեշտ ցոյց տուած է մեզ։

Գնողին համար իբր միակ երաշխաւորութիւն, պէտք է որ ապրանաց վրայ գտնուի գործարանին նշանն և ՔՐԻՍԹՈՖԼ անունն ամբողջ տառերով։

Կ. Պոլսոյ և Թուրքիոյ համար մեր միակ ներկայացուցիչներն են ՊՈՐԹՈԼԻ ԵՂԲԱՐՔ, Ի ՊՕՆ ՄԱՐՇԷ, 354, Բերայի մեծ փողոց, ուր գնողք կրնան վստահ լինիլ, թէ մեր անուամբ սուտ ապրանք չպիտի ծախուի իրենց։

85 ՔՐԻՍԹՈՖԼ և ԸՆԿ.

ՖՐԱՆՔՕ–ՀՕՆԿՐՈՒԱԶ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Ի ՊՈՒՏԱՓԷՍԹ
ՀԱՆԴԵՐՁ ՎԻՃԱԿ ՀԱՆՈՒԹԵԱՄԲ

Արտօնեալ դրամագլուխ	20,000,000
Գանձեալ	10,000,000
Մահուան արկածից դէմ պահեստ	12,000,000

Նախագահ [illegible] Մ. Լոմէն Լակարոս
» [illegible] գործակալ և քննիչ. Մ. Նազարէթ Նազըճեան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալեօզեան և Պալրքճեան Զմիւռնիա. Գասպարեան և Տամլամայեան Ատանա. Գ. և Ս. Սեթեան Հալէպ. Բ. Շէրէֆէտտին և Տէրտոնեան Ատալիա և Սպարթա. Սիմէոն Տէյիրմէնճի օղլու Քօնեա, եւն եւն.

Ֆրանքօ-Հունգարական կենաց անանուն ընկերութիւնը խիստ դիւրամատչելի պայմաններով մահուան դէմ ապահովութիւններ կ'ընդունի, նմանապէս փոքր աղջկաց և այլկանց ի չափահասութեան վճարելի պայմանաւ։

Ամէն որդւոյ կը հարկէ ըսել թէ ամէն ընտանեաց և զաւակաց տէր անձանց իբր նախախնամութեան պարտականութիւն մ'է տարեկան փոքրիկ զոհողութեամբ մը իր կեանքն և իր զաւակաց ապագան ապահովել. կամ ի ծերութեան օրերու և կամ յետ մահու իր [illegible] ապահովել [illegible] Ֆրանքօ-Հունգարական ընկերութեան [illegible] որ [illegible] Ամեն [illegible] 100 անգլիական ոսկի [illegible]

Ամէն ի բնչութեան և կարեւոր տեղեկութիւններ առնելու համար պէտք է դիմել առ վերոյիշեալ [illegible]

Գոհութեամբ կը ծանուցանենք յարգոյ հասարակութեան թէ, ընկերութեանս 1885 յունուար 1էն մինչ 1886 տարւոյն յունուար 1ի ընդհանուր գործողութեանց հաշուեցուցակին, ([illegible]) պահեստի գումարին վրայ 2 միլիոն ֆրանգի պատկառելի գումար մը յաւելում եղած է, որով անցեալ տարւոյն 10 միլիոն պահեստի գումար ներկային 12 միլիոն է։ 285

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տօքթոր Այէրի ջերմային հիւանդութեան, այս դեղն՝ որ անխառն բուսաբուժութիւն մ'է զուտ բուսեղինաց, է գտնուած և ազդու կազդուրիչ ամէն տեսակ ջերմային տենդերու, որ յառաջ կու գան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ ստոյգ յատկութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը ստոյգ փաստեթեամբն։ Այս Փիզիքական խանգարումներն յառաջ կու գան օդին մէջ լողացող թունաւոր անշմարելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն, որոց աս անունները տրուած է. ջերմ և սարսուռ, թալուոտ ջերմ, պարբերական ջերմ, ընդհատեալ ջերմ, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր ամենօրոտ ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ախոռներու ծակտիկներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտ ստոյգ, միայն թէ տրուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 166



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԻ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

1686

1889 ՅՈՒՆԻՍ 4 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

[illegible] ելնող շոգենաւներ

11 — Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզկ. Պէշիք.
11 — Արնավ. Գուրուչ. Օրթագ. Պէշիք.
11 — Ենիմ. Մեզպ. Պէօյիւք. Թար. Ենիք. Իսթէն. Միրկ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիկթաշ
11 20 Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ.
11 45 Ի Ա. Գավագ Ենիմ. Մեզպ. Պէօյտ. Թարպ. Ենիք. Միրկ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիկթա.
12 15 Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ Գուզկ Իւսկ.
1 — Ենիմ. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Միրկ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք.
1 30 Ենիմ. Մեզպ. Պէօյիւքտ. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյ. Գուզ. Գապ.
2 — Ենիմ. Մեզարպ. Պէօյիւքտէրէ Թարապ. Ենիք. Միրկ. Ի. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթա. Պէշիք.
2 50 Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլ. Գուզկ. Իւսկ.
3 — Ենիմ. Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիքթաշ
4 — Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիք.
4 15 Ենիմ. Մեզպ. Պէօյիւքտ. Թարպ. Ենիք. Իսթէն. Միրկ. Պօյճ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.
5 45 Ենիմ. Մեզարպ. Պէօյիւքտ. Թար. Ենիք. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիքթաշ
7 — Ենիմ. Մեզարպ. Պէօյիւք. Թարապ. Պէյգ. Բաշպ. Ենիք. Միրկ. Գանլըճ. Ի. Ա. Հիսար Գանտիլ. Արնավ. Չէնկէլ. Պէյլ. Օրթ. Գուզկ. Պէշիք. Իւսկ.
7 45 Ա. Ի. Գավ. Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Միրկէօն Ի. Հիսար Պէպէք. Արնվ. Օրթագ. Պէշիկ.
8 45 Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ. Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ.
9 — Ենիմ. Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Ենիք. Իսթէն. Պօյաճ. Ի. Հիսար Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.
10 — Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թարպ. Ենիք. Միրկ. Ի. Հիսար Պէպէք Արնվ. Օրթ. Պէշիք.
10 30 Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թարպ. Ենիք. Պօյճ. Ի. Հիսար Արնվ. Գուր. Օրթ. Պէշիք.
10 45 Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թարպ. Պէյգօզ Բաշպ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ.
11 — Մեզպ. Պէօյ. Թարպ. Ենիք. Միրկ. Ի. Հիսար Արնվ. Օրթ. Պէշիք.
12 — Մեզպ. Պէօյիւքտ. Թարպ. Ենիք Պօյաճ. Ի. Հիսար Արնվ. Օրթ.

Կամուրջէն ելնող շոգենաւներ

12 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ի. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյիւք. Մեզպ. Ենիմահալլէ
1 — Պէշիք. Օրթ. Արնվ. Ի. Հիսար Պօյճ. Ենիք Թարպ. Պէօյք Մեզպ. Ենիմ.
1 45 Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշպ. Պէյգօզ Թարպ. Պէօյիւք. Մեզպ.
2 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ի. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյք. Մեզպ. Ենիմ.
2 — Գավաքթ. Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլ. Չէնկէլք. Արնավ. Գանտ. Ա. և Ի. Հիսար Գանլըճ. Միրկ. Ենիք. Բաշպ. Պէյգ. Թարապ. Պէօյիւք. Մեզարպ. Ենիմ.
3 — Պէշիք. Օրթ Գուր. Արնվ. Պէպէք Ի. Հիսար Պօյճ. Իսթէն. Ենիք. Թարպ. Պէօյիւք. Մեզպ. Ենիմ.
3 30 Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշպ. Պէյգօզ Թարպ. Պէօյիւք. Մեզպ. Ենիմ.
4 15 Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Ի. Հիսար Պօյաճ. Ենիք. Թարպ. Պէօյիւք. Մեզպ. Ենիմ.
5 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ի. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյիւք. Մեզպ. Ենիմ. Ի. Ա. Գավագ
6 — Գավաքթ. Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթագ. Արնավ Ի. Հիսար Միրկ. Ենիք. Պէյգօզ Թարպ. Պէօյ. Մեզարպ. Ենիմ.
7 — Պէշիք. Իւսկ. Գուզկունճ. Օրթագ. Պէյլէր. Չէնկէլ. Արնավ. Գանտլ. Ա. և Ի. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյիւքտ. Մեզպ. Ենիմ.
8 30 Պէշիք. Օրթ. Արնավ. Պէպէք Ի. Հիսար Միրկ. Ենի. Թար. Պէօյ. Մեզ. Ենիմ.
9 15 Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշպ. Պէյգօզ Թարապ. Պէօյիւք. Մեզպ.
10 5 Գապ. Գուզկ. Պէյլէր. Չէնկ. Վան. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպուգլը Բաշպ. Պէյգ. Թար. Մեզ. Ի. և Ա. Գավագ.
10 15 Պէշիք. Օրթագ. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ի. Հիսար Պօյաճ. Ենիք. Թարապ. Պէօյ. Մեզարպ.
11 — Պէշիք. Օրթագ. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ի. Հիսար Միրկէօն Իսթէն. Ենիք. Թարպ. Պէօյիւք. Մեզարպ. Ենիմ.
11 — Գուզկ. Պէյլէր. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպ. Բաշպ. Պէյգ.
11 30 Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկ. Վանք.
12 — Պէշիք. Օրթ. Արնվ. Ի. Հիսար Միրկ. Ենիք. Թարպ. Պէօյիւք.